

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

« ԳՈԼԴ ԼԱՅՄ »

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

---

**ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ**

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՓԻ ՕՐԳԱՆԱԾԻՆ  
ԿՐԱՔԱՐԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ «ՇԵՆ» ՏԵՂԱՄԱՍՈՒՄ  
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ  
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՏՆՕՐԵՆ



Ռ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ-----4

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ-----8

1.1 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը-----8

1.2 Նախատեսվող գործունեության բնութագիրը-----15

1.3 Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը-----18

2.ՇՐՋԱԿԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ-----22

2.1Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը-----22

2.2 Ռելիեֆը, երկրաձևաբանությունը-----23

2.3 Կլիմա-----26

2.4 Մթնոլորտային օդ -----29

2.5 Ջրային ռեսուրսներ -----32

2.6 Հողային ծածկույթ-----34

2.7 Բուսական և կենդանական աշխարհ-----35

2.8 Վտանգված էկոհամակարգեր և բնության հատուկ պահպանվող տարածքներ-----39

2.9 Պատմության, մշակույթի հուշարձաններ և -----45

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ-----47

3.1 Արարատի մարզի սոցիալ տնտեսական բնութագիրը-----47

3.2 Ազդակիր համայնքները, ենթակառուցվածքները /առողջապահություն, տրանսպորտային համակարգ, էներգացանց, կրթություն/, հողերի տնտեսական յուրացման բնութագիրը-----50

4.ՇՐՋԱԿԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ-----52

4.1 Հիմնական բնապահպանական ռիսկերը-----52

4.2 Հանքարդյունաբերության ազդեցությունը կրող հիմնական սուբյեկտները-----52

5. ՎՆԱՍԱԿԱՐԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ-----53

5.1 Մթնոլորտային օդ-----53

5.2 Մակերևութային և ստորգետնյա ջրեր -----	53
5.3 Հող-----	53
5.4 Բուսական և կենդանական աշխարհ-----	54
5.5 Պատմամշակութային արժեքներ-----	54
5.6 Սոցիալական ազդեցություն-----	54
5.7 Բնապահպանական մշտադիտարկումների պլան-----	55
Հավելված1. Բնապահպանական կառավարման պլան-----	59
Հավելված2.Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական -----	64
Օգտագործված գրականություն-----	65

## ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

**Շրջակա միջավայր`** բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ` անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև:

**շրջակա միջավայրի վրա ազդեցություն`** հիմնադրությամբ փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները:

**նախատեսվող գործունեություն`** շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

**ձեռնարկող`** սույն օրենքի համաձայն` փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

**ազդակիր համայնք`** շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:

**շահագրգիռ հանրություն`** փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք:

**գործընթացի մասնակիցներ`** պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ` ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և (կամ) փորձաքննության գործընթացին:

**հայտ`** ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրությամբ փաստաթղթի մշակման և (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ:

**բնության հատուկ պահպանվող տարածք`** ցամաքի (ներառյալ` մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի` սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

**ազգային պարկ՝** բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների գուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

**ազգային պարկի արգելոցային գոտի՝** ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը:

**ազգային պարկի արգելավայրային գոտի՝** ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը:

**ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝** ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը:

**ազգային պարկի տնտեսական գոտի՝** ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն:

**պետական արգելավայր՝** գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը:

**պետական արգելոց՝** գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության:

**բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝** տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա:

**լանդշաֆտ՝** աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ:

**հող՝** երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ:

**հողային պրոֆիլ**՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջությունն է.

**խախտված հողեր**՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

**հողի բերրի շերտ**՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

**հողի պոտենցիալ բերրի շերտ**՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

**հողածածկույթ**՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

**հողի բերրի շերտի հանման նորմեր**՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ<sup>3</sup>), զանգվածը (տ).

**ռեկուլտիվացում**՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

**ռեկուլտիվացիոն աշխատանքներ**՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

**կենսաբանական բազմազանություն**՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

**երկրաբանական ուսումնասիրություններ**՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները.

**բնապահպանական կառավարման պլան**՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

**բնության հուշարձան**, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող

երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

**պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ`** պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները` իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճակագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը` անկախ պահպանվածության աստիճանից:

**Կարմիր գիրք`** <<Կարմիր գիրքը միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին>>

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Գործունեության անվանումն է՝ ՀՀ Արարատի մարզի Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասի օգտակար հանածոի արդյունահանում:

Հանքավայրի պաշարները հաստատվել են 20.09.2009թ-ի դրությամբ, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալության կողմից 2010 թ. օգոստոսի 9-ի N 268 որոշմամբ, ըստ բլոկ 1-B-1571.2 հազ.տ և բլոկ 2-C<sub>1</sub>-498.1 հազ.տ կարգերի, ընդամենը 2069.3հազ.տ: Գնահատված է որպես կավձի արտադրության համար, համապատասխանաբար «Мел. Виды, марки и основные технические требования» 17498-72 ԳՈՍՏ-ի տեխնիկական պահանջի:

Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասը վարչատնտեսական ստորաբաժանմամբ գտնվում է ՀՀ Արարատի մարզի արևելյան մասում, Շաղափ գյուղից՝ 3 կմ հարավ-արևմուտք:

Տեղամասը մարզկենտրոն Արտաշատի հետ կապված է ասֆալտապատ մայրուղով և երկաթուղով, իսկ Շաղափ գյուղի հետ՝ գրունտային ժանապարհով:

Մոտակա բնակավայրերն են՝ քաղաքներ Վեդին, Արարատը և Գոռավան, Շաղափ, Ուրցաձոր գյուղերը:

Արարատի ենթաշրջանը գտնվում է Արարատյան դաշտավարի հարավ-արևելյան մասում՝ ընդգրկելով Արածո դաշտը և դրան հարող նախալեռները: Հյուսիս-արևելքում շրջանը եզրավորվում է Գեղամա լեռնաշղթայով (լ. Ուրց 2445մ): Այս լեռնաշղթաների նախալեռնային գոտիները ներկայացված են առանձին բարձրացումներով ու ջրագուրկ ձորակներով և կտրված բլրային ռելիեֆով:

«Շեն» օրգանածին կրաքարերի տեղամասը հարում է այդ նախալեռնային մասին, որոնց լանջերը դեպի հարավ և հարավ-արևմուտք իջնում են մինչև Արաքս գետի հովիտը:

Շրջանի ջրագրական ցանցը թույլ է զարգացած: Հիմնական ջրային միավորը սահմանային արաքս գետն է՝ իր Վեդի ձախ վտակով, որը հոսում է տեղամասից 1.5կմ հյուսիս-արևմուտք, ընդլայնական ուղղությամբ՝ շրջանցելով Ուրցի լեռնաշղթան: Վեդի գետը իր ստորին հոսանքում հոսում է լայն հովիտով և լցված են գետաբերուկային առաջացումներով: Գետի ջրերն հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակներով:

Արարատի մարզը բնութագրվում է զարգացած արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ: Բնակչությունը հիմնականում զբաղվում են այգեգործությամբ, հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաների մշակմամբ, ինչպես նաև անասնապահությամբ:

Արդյունաբերությունը ներկայումս հիմնականում ներառում է մի շարք ձեռնարկություններ, որոնք զբաղվում են բնական բարձրորակ շինանյութերի արդյունահանմամբ և մշակմամբ: Արարատի տրավերտինների կավերի հանքավայրերի հումքի բազայի վրա 1933թ-ից գործում է Արարատի ցեմենտի գործարանը:



Արդյունաբերությունը մասամբ ներկայացված է գյուղմթերքների մշակման ձեռնարկություններով (զինի, կոնյակ, պահածոներ):

Վառելիքա-հումքային և անտառանյութերի պահանջարկը բավարարվում են միայն ներմուծման հաշվին:

Արարատի մարզը լիովեին էլեկտրաֆիկացված է և մասամբ գազաֆիկացված: Բարձր լարման էլեկտրագծերն անցնում են «Շեն» տեղամասից 1.5կմ դեպի հյուսիս, Շաղափ գետին գուգահեռ:

Հայցվող Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասը գտնվում է Շաղափի սինկլինալային ծալքավորման հարավային թևում՝ Ուրցի լեռնաշղթային հարավ-արևմտյան նախալեռնային մեղմաթեք լանջին: Տեղամասի տարածքը սահմանափակվում է հետախուզական փորվածքներով և օգտակար հաստվածքի բնական մերկացված քիվերով: Տեղամասի երկրաբանական կառուցվածքի հիմքում տեղադրված են միջին էոցենի հասակի մոլասային նստվածքային առաջացումները (ավազաքարեր, կրաքարեր, կավեր և կավային ավազաքարեր), որոնք մերկանում են տեղամասի հարավային մասում մինչև 300մ հզորությամբ: Ավազաքարերն ունեն դեղնա-շագանակագույն երանգ, ցեմենտացված են կարբոնատային ցեմենտով: Ավազաքարերի ստրուկտուրան բազմահատիկային է (0.2-1.5մ): Դրանք տեղադրված են միջին էոցենի կտրվածքի ստորին ու վերին հորիզոններում: Կրաքարերը և կավերը, որոնք տարածված են կտրվածքի միջին մասերում, ունեն փոքր հզորություններ, իսկ վերին մասը ներկայացված են մերգելներով, որտեղ  $\text{CaCO}_3$  պարունակությունը մինչև 70%:

Օրգանածին կրաքարերը տարածված են կտրվածքի միջին մասում, ունեն հստակ արտահայտված շերտայնություն: Ցեմենտացնող հիմնական նյութը համարվում է կալցիտը:

Վերը նկարագրված միջին էոցենի ապարների վրա ներդաշնակ տեղադրված են վերին էոցենի հասակի ապարները, որոնք ներկայացված են տերիգեն-կարբոնատային հաստվածքներով և առանձնացվում են ստորին կավային դարսաշերտ և վերին կարբոնատային (օգտակար հաստվածք):

Կավային դարսաշերտի ապարները ներկայացված են դեղնա-մոխրագույն (տեղ-տեղ կանաչավուն երանգով) կավերի, կավավազների և ավազակավերի հերթափոխվող շերտերով: Նշված ապարները մերկանում են տեղամասի արևելյան մասում:

Կավային դարսաշերտի տեղադրման տարրերն են՝ անկման անկյան 20-25° անկման ազիմուտ 25-40°: Նշված ապարների տեսանելի հզորությունը հասնում է 50մ:

Կարբոնատային դարսաշերտ: Ներկայացված են օրգանածին կրաքարերով, որոնք ներդաշնակ տեղադրված են ավազաքարերի և կավային դարսաշերտի ապարների վրա և ունեն հետևյալ տարածման էլեմենտները՝ անկման ազիմուտ հյուսիս-արևելք 20-40°, անկման անկյուն՝ 20-25°:

Կրաքարերի և կավերի մերձհպակային մասում կարբոնատացված են և պարունակում են կրաքարերի բեկորներ: Կրաքարերը հիմնականում սպիտակավուն՝ բաց դեղնավուն, դեղնամոխրագույն երանգով, մանրա-միջնահատիկ, հոծ, հաստ շերտավոր հորիզոնականին մոտ շերտայնությամբ, մինչև 30.0մ հզորությամբ ապարներ են:

Միջշերտային տարածությունները լցված են 0.03-0.05մ հզորությամբ ավազակավային ենթաշերտով:

Հիմնական զանգվածը ներկայացված է մանրահատիկ կալցիտով: Ապարում նկատվում են մակրո և միկրո բրածո օրգանական մնացորդներ՝ ներկայացված նումուլիտների և դիսկոցիկլինների տարատեսակների մնացորդներով, երբեմն հանդիպում են նաև երկփեղկանիներ և կորալներ: Օրգանածին կրաքարերի 1-2սմ տրամագծով դատարկություններում հանդիպում են բարիտի և ցելեստիտի բյուրեղներ:  $\text{CaCO}_3$  բանակությունը ապարում բարձր է և հասնում է 90-98%: Հանդիպում են նաև դաշտային շպատ, քվարց, քվարցիտ, քլորիդ, գլաուկոնիտ, երկաթի հիդրոքսիդ և այլն:

Կրաքարերի հաստվածքի հզորությունը՝ հետախուզման սահմաններում, հասնում է 34.5մ՝ կազմելով միջինը 13.85մ: Կրաքարերի հաստվածքի մերձակերևույթային մասերը խիստ ճեղքավորված և հողմնահարված են: Այդ երեսաշերտի հզորությունը հասնում է 0.4-0.6մ: Օգտակար հանածոյի հզորությունների տատանումները պայմանավորված են երկրաբանական ու ֆիզիկա-մեխանիկական գործոններով:

Հորատանցքերում՝ տարբեր խորությունների վրա, դիտվում են կրաքարերի հաստվածքի ճեղքավորված և բեկորացված, կրակավային նյութով թույլ ցեմենտացված կրաքարերի ենթաշերտեր, որոնց հզորությունը տատանվում է 0.04-0.05մ սահմաններում: Այս ենթաշերտերը երկրաչափական համահարաբերակցման չեն ենթարկվում:

Մնարադիտակի տակ կրաքարերի կառուցվածքը մանրա-միջին հատիկային է, մասամբ՝ բյուրեղային, կազմվածքը՝ հոծ կրճավոր: Բյուրեղային հատիկները ներկայացված են կալցիտով (0.20-1.8մմ): Ցեմենտացնող զանգվածը ներկայացված է կրիպտոբյուրեղային կարբոնատային և չնչին քանակությամբ կավային նյութերով:

Կրաքարերի առաջացումը տեղի է ունեցել եոցենյան ծովային ավազանում տերիգեն և հեմոգեն նյութերի նստեցման՝ լիթոգենեզի արդյունքում: Օգտակար հաստվածքում ոչ կոնդեցիոն ենթաշերտերի առաջացումը պայմանավորված է նստվածքակուտակման պայմանների հետագա փոփոխություններով:

Ժամանակակից առաջացումները, որոնք լայն տարածում ունեն, ներկայացված են դելյուվիալ, էյուվիալ և պրոլյուվիալ առաջացումներով: Դելյուվիալ և պրոլյուվիալ առաջացումները ներկայացված են պալեոգոյից մինչև չորրորդականի հասակի ապարների մեխանիկական և քիմիական հողմնահարումից առաջացած խոշորա-մանրահատիկ, չհղկված ապարների բեկորներից, որոնք անձրևաջրերի և ձնհալի ժամանակ տեղափոխվել են և առանց տեսակավորման նստել ձորակներում ու ցածրադիր վայրերում՝ առաջացնելով մինչև 8.3մ հզորությամբ ծածկույթ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքները վկայում են, որ Շաղափի կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասի սահմաններում կրաքարերի օգտակար հաստվածքները ներկայացված է մեղմաթեք անկմամբ, շերտաձև մարմնի տեսքով:

Հետագոտված կրաքարերի ճեղքավորվածության աստիճանը և ֆիզիկամեխանիկական հատկությունները բավականին կայուն են, միներալոգիական և

պետրոգրաֆիական կազմերը համանման են: Տեղամասի սահմաններում տեկտոնական խախտումներ և կարատառաջացման երևույթներ չեն հայտնաբերված:

Շինարարության մեջ, շենքերի և կառուցվածքների վերանորոգման համար և արտադրության այլ ճյուղերում օգտագործվող օրգանածին կրաքարերից ստացվող կավձի համար պարտադիր պայման է, որ կրաքարերում կալցիումի և մագնեզիումի կարբոնատների պարունակությունները՝ վերահաշվարկված կալցիումի կարբոնատի պարունակության, փոքր չլինի 90%-ից, ընդ որում  $MgCO_3$ -ի քանակը չպետք է գերազանցի 2-3%-ից:

Շաղափի հանքավայրի «Շեն» տեղամասի օրգանածին կրաքարերի որակական հատկությունների բնութագիրը տրվում են դրանց լաբորատոր փորձարկումների արդյունքներով:

Աղյուսակ 1.1

քիմիական կազմը

Հ/Հ	Պարունակությունները, %											
	Չլուծվող նստվածք	Խոն.	ԿՊՇ	SiO <sub>2</sub>	Al <sub>2</sub> O <sub>3</sub>	Fe <sub>2</sub> O <sub>3</sub> + FeO	TiO <sub>2</sub>	CaO	MgO	Na <sub>2</sub> O K <sub>2</sub> O	CaCO <sub>3</sub> քանակը	գումարը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1	1.30	0.16	42.65	0.87	0.80	0.18	հետք	54.21	0.31	0.33	96.86	99.35
2	1.12	0.13	43.04	0.91	0.75	0.25	հետք	54.14	0.28	0.31	97.38	99.57

Վերոհիշյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ Շաղափի հանքավայրի «Շեն» տեղամասի օրգանածին կրաքարերն ամենայն հաավանականությամբ կարելի է եզրագծել ու հաշվարկել օգտակար հանածոյի այնպիսի պաշարներ, որոնք արդեն իսկ բնական վիճակում  $CaCO_3$  –ի 95 %-ից բարձր պարունակությունով համապատասխանում է MK-2 մակնիշի պահանջներին և կարող են օգտագործվել շինարարությունում շենքերի ու կառույցների վերանորոգման (շինարարական մածուկներ պատրաստելու) համար:

Բերված եզրահանգումները հիմնվում են շարքային նմուշների քիմիական արդյունքների վերլուծությունների վրա, իսկ այդ արդյունքների արժանահավատությունը գնահատվել են ներքին և արտաքին ստուգողական անալիզների միջոցով:

Շաղափի հանքավայրի «Շեն» տեղամասի օրգանածին կրաքարերի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշվել են 5 հանույթային և 4 ակոսային նմուշների փորձարկման արդյունքներով, որը կատարվել է «Քար և սիլիկատ» ՓԲԸ «Շինարարական նյութերի ֆիզիկամեխանիկական փորձարկումների գիտահետազոտական կենտրոն» լաբորատորիայում: Ֆիզիկամեխանիկական փորձարկումների ծրագրում ընդգրկվել են օգտակար հանածոյի հետևյալ ցուցանիշները՝ խտությունը, ջրակլանումը:

Ստորև բերվում են օրգանածին կրաքարերի ֆիզիկամեխանիկական փորձարկումների արդյունքները

Օրգանածին կրաքարերի ֆիզիկամեխանիկական հատկությունները

Հ/Հ	Ցուցանիշները	Չափման միավորը	Ցուցանիշների մեծությունը		
			նվազագույն	առավելագույն	Միջինը
1	2	3	4	5	6
1.	Իրական խտությունը	գ/սմ <sup>3</sup>	2224	2651	2474
2.	Ծավալային զանգվածը	գ/սմ <sup>3</sup>	2.39	2.53	2.47
3.	Ծակոտկենությունը	%	5.7	17.3	9.89
4.	Ջրակլանելիությունը	%	1.38	5.08	2.83
5.	Ամրության սահմանը սեղմման ժամանակ				
	-չոր վիճակում	կգ/սմ <sup>3</sup>	118	488	265
	-ջրահագեցած վիճակում	կգ/սմ <sup>3</sup>	80	199	165
	-25 փուլ սառեցումից հետո	կգ/սմ <sup>3</sup>	55	139	110
6.	Փափկեցման գործակից	-	0.68	0.71	0.69
7.	Սառնակայունության գործակից	-	0.69	0.71	0.70

Տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ փորձարկման են ենթարկվել արհեստական մանրահանքի (առիտ) ուսումնասիրություններ մեկական հանուկային ու ակոսային նմուշների կրկնօրինակներից:

Միներալային կազմը ուսումնասիրելու համար լվացված մանրահանքը նախօրոք տարանջատվել է ծանր ու թեթև ֆրակցիաների:

Մանրակրկիտ ուսում նասիրվել են օրգանածին կրաքարերի հատիկայնությունը, հղկվածության աստիճանը, նրանց մեջ պարունակող միներալները, վնասակար խառնուրդների տեսակները և քանակը:

Թեթև ֆրակցիան, հիմնականում ներկայացված են մանրա-միջահատիկ վերաբյուրեղացված կալցիտից, քիչ քանակությամբ քվարցից, դաշտային շպատից (պլազիոկլազ), հազվադեպ տուֆի հատիկներից և գլաուկոնիտից:

Ծանր ֆրակցիան ներկայացված է երկաթի օքսիդով, պիրիտով, հեմատիտով, բարիտով և ցելեստինով:

Հանդիպում են նաև հիդրոցիկլինի, նումուլիտի, մանր ֆոլամինիֆեյների օրգանական մնացորդներ: Նման միներոլագիական կազմը ապացուցվում է նաև պետրոգրաֆիական ուսումնասիրությունները:

Շաղափի հանքավայրի «Շեն» տեղամասի օրգանածին կրաքարերի ռադիոմետրիական չափումների արդյունքում պարզվել է օգտակար հանածոյի գումարային տեսակարար ակտիվությունը՝  $A_c$  –ն տատանվում է 11.8-13.4 մկր/ժամ սահմաններում: Ստացված տվյալների համաձայն՝ կարելի է եզրակացնել, որ «Շեն» տեղամասի օրգանածին կրաքարերը ճառագայթահիգիենիկ հատկություններով լիովին

համապատասխանում են HPB-96 նորմատիվային փաստաթղթի պահանջներին և կարող են օգտագործվել կավճի արտադրության համար:

Հանքավայրի շրջանը բնութագրվում է կտրուկ կտրտված բլուրային ռելիեֆով, խորը ձորակներով, որոնցով հոսում է Շաղափ գետը իր ձախակողմյան բազմաթիվ արագահոս վտակներով: Նշված գետերը հիմնականում անվանում են աղբյուրներից, ձնհալից ու տեղումներից, որոնք ունեն սեզոնային բնույթ:

Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասում հատուկ ջրաերկրաբանական ուսումնասիրություններ չեն կատարվել: Դիտարկումներով պարզվել են ստորերկրյա ջրերի բացակայությունը բոլոր հետախուզական փորվածքներում: Բացի այդ, ուսումնասիրված շրջանում և շահագործվող հանքավայրերում ստորերկրյա ջրերի առկայություն չեն արձանագրվել: Դրանք հիմնականում կապված են ապարների լիթոլոգիական կազմության, ճեղքայնության և ջրաթափանցիկ հատկությունների հետ:

Ստորերկրյա ջրերը հիմնականում կապված են պալեոզոյի և մեզոկայնոզոյան հասակի կրաքարերի, կավերի և կավավազաքարերի միջջերտային ճեղքերի հետ և բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս երկրի մակերես: Այլուվիալ-դելյուվիալ առաջացումների հետ կապված՝ գրունտային ջրերը փոքր բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս Շաղափ գետի վտակների միջին ու վերին հոսանքներում, որոնք ունեն սեզոնային բնույթ:

Շրջանում մթնոլորտային տեղումների միջին քանակը տարեկան չի գերազանցում 400-500մմ-ը, որոնց մի մասը ներծծվելով ապարների ճեղքերում և ծակոտիներում, բեռնաթափվում են սեզոնային աղբյուրների ձևով, իսկ մյուսները ժամանակավոր հոսքերի տեսով հոսում են դեպի Շաղափ և Վեդի գետերը:

Ելնելով վերը նշվածից կարելի է արձանագրել, որ տեղամասի ջրաերկրաբանական պայմանները բարենպաստ են:

Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասի լեռնաերկրաբանական պայմանները բնութագրվում են հետևյալ տվյալներով: Տեղամասը ներկայացված է երկու տարանջատված՝ համարյա իրար հարող մարմիններով, որոնցից հարավ-արևելյանը գտնվում է բարձր դիրքում, իսկ մյուսը իրենից ներկայացնում է մերձմակերեսային շերտաձև մարմին՝ սակավաթեք տեղադրումով, կայուն հզորությամբ և որակական հատկանիշներով:

Երկու մարմիններն էլ համատարած ծակված են մակաբացման ապարների շերտով, որը իրենից ներկայացնում է մինչև 0.3մ հզորության հողաբուսական քարքարոտ և մինչև 8.3մ հզորության ավազակավերի, կավերի և օրգանածին կրաքարերի դելյուվիալ առաջացումներով:

ՀՀ Արարատի մարզի Շաղափի օրգանածին կրաքարերի «Շեն» տեղամասը ՇԱԹՎ 25/030 թուլտվությամբ /նախկին 14/637/, 2010 թվականի հոկտեմբերի 7-ից սկսած շահագործվում է: Շահագործման ընթացքում 2-Շ<sub>1</sub> բլոկի 1700մ<sup>2</sup> մակերեսով տարածքից արդյունահանվել է

15000մ<sup>3</sup> օգտակար հանածո, որի ընթացքում տվյալ տարածքից հեռացվել է 3000մ<sup>3</sup> մակաբացման ապարներ:

Համաձայն “ԳՈԼԴ ԼԱՅՄ” ՍՊԸ-ի կողմից ներկայացված 5-ԵՀ հաշվետվության 01.01.2021 թվականի դրությամբ 1-Յ բլոկից /մոտ 1հա մակաբացված մակերեսով տարածքից/ արդյունահանվել է 89861մ<sup>3</sup> օգտակար հանածո, որի ընթացքում 9000մ<sup>3</sup> մակաբացման ապարներ հեռացվել և տեղափոխվել է տվյալ բլոկից դուրս նրա արևելյան կողմի արտաքին լցակույտ:

Սույն նախագծային փոփոխության նպատակն է՝ կատարել 1-Յ բլոկի բացահանքի ընդլայնում, ժամկետի երկարաձգում ընդունելով հետևյալ անկյունային կետերի կոորդինատները.

Տեղամասի անկյունային կետերի կոորդինատներն են.


Կոորդինատային համակարգը՝ ARM WGS-84:

1-Յ բլոկ – S=3.86հա

ՀՀ	X	Y
1	4415881	8487370
2	4415877	8487423
3	4415763	8487503
4	4415661	8487540
5	4415532	8487344
6	4415597	8487300
7	4415631	8487348
8	4415674	8487372
9	4415800	8487389
10	4415874	8487368

2-Ը բլոկ – S=2.037հա

ՀՀ	X	Y
1	4415696	8487228
2	4415700	8487233
3	4415684	8487296
4	4415860	8487298
5	4415892	8487342
6	4415800	8487383
7	4415690	8487364
8	4415629	8487329
9	4415606	8487285
10	4415644	8487271
11	4415666	8487259



Նկար1.

## 1.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսվում է՝

Բացահանքի նախագծով նախատեսվում է արդյունահանումը իրականացնել երկու փուլով՝

**1-ին փուլ**-Արդյունահանման ժամկետն է 20տարի

Ընդգրկում է 1-Յ բլոկից 2.56հա մակերես:

Մարվող պաշարների 404860մ<sup>3</sup> կամ 1մլն.տ ծավալ:

Տարեկան արտադրողականությունն է 20243մ<sup>3</sup> կամ 50.0 հազ.տ մարվող պաշար:

Արդյունահանվող պաշարներ՝ 380567մ<sup>3</sup> կամ 940հազ.տ:

Տարեկան արդյունահանվող՝ 19030 մ<sup>3</sup> կամ 47.0 հազ.տ:

Մակաբացման ապարների քանակը բացահանքում կազմում է՝ 32500մ<sup>3</sup>, 1.27մ միջին հզորությամբ /1-Յ բլոկ/:

**2-րդ փուլ**- արդյունահանման ժամկետն է 21-40տարի:

1-Յ բլոկից ընդգրկում է 1.3հա մակերես և 2- Գ-ից 2.037հա մակերես:

Մարվող պաշարների քանակն է 1-Յ բլոկ- 141419մ<sup>3</sup> և 2- Գբլոկ- 186650մ<sup>3</sup>: Մարվող պաշարները երկու բլոկները միասին կազմում են 328069մ<sup>3</sup> կամ 810330տ: Տարեկան

արտադրողականությունը 2-րդ փուլում կազմում է 16403.5մ<sup>3</sup> կամ 40516.5 տ մարվող պաշար:

2-րդ փուլում մակաբացման ապարների քանակը բացահանքում կազմում է՝ 16500մ<sup>3</sup>, 1.27մ միջին հզորությամբ /1-Յ բլոկ/ և 33000մ<sup>3</sup> 1.77մ միջին հզորությամբ /2- Շ բլոկ /: Միասին մակաբացման ապարների քանակն է 49500 մ<sup>3</sup>:

Սույն նախագծով նախատեսվում է՝

1. Հանույթային աշխատանքները կատարել առանց հորատապայթեցման աշխատանքների եղանակի:

2. Տեղամասը շահագործել բաց եղանակով՝ վերնից-ներքև խորացումով մշակման համակարգով:

3. Հանքարդյունահանման աշխատանքները կատարել շուրջտարյա աշխատանքային ռեժիմով՝ 260 օր:

4. Մակաբացման ապարները հեռացումը կատարվում է բուլդոզեր-անիվային բարձիչ լեռնատրանսպորտային համալիրով:

5. Բացահանքի աշխատանքների կազմակերպման համար նախատեսել արտադրական հրապարակ իր անհրաժեշտ կառույցներով:

6. Շահագործման ավարտից հետո կատարել հանքավայրի ռեկուլտիվացիա:

7. Տեխնիկական և խմելու ջրի մատակարարումն իրականացվելու է բերովի սկզբունքով՝ ավտոցիստեռներով, պայմանագրային հիմունքներով, Շաղափ բնակավայրից:

### **1.2.1. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները**

Հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից ելնելով նախատեսվում է տեղամասի մշակումը ընդլայնական խորացող մշակման համակարգով, մակաբացման ապարները սկզբնական շրջանում արտաքին այնուհետև ամբողջ հզորությամբ մշակված տարածքներում ներքին լցակույտ տեղափոխելով:

#### **Բացահանքի նախագծային պարամետրերն են.**

##### **Շահագործման 1-ին փուլ /1-Յ բլոկ/**

- առավելագույն երկարությունը, մ - 260
- առավելագույն լայնությունը, մ -116
- առավելագույն խորությունը, մ – 34.5
- օտարման մակերեսը 1-ին փուլում, հա -2.56

##### **Շահագործման 2-րդ փուլ**

- առավելագույն երկարությունը 1-Յ բլոկ, մ - 370
- առավելագույն լայնությունը 1-Յ բլոկ, մ -116
- առավելագույն երկարությունը 2- Շ բլոկ, մ - 287
- առավելագույն լայնությունը 2- Շ բլոկ, մ -85
- առավելագույն խորությունը 1-Յ բլոկ, մ – 34.5



- առավելագույն խորությունը 2- Շիբլոկ, մ – 11.2
- օտարման մակերեսը 2-րդ փուլում 1-Յ բլոկ, հա -3.86
- օտարման մակերեսը 2-րդ փուլում 2- Շիբլոկ, հա -2.04

**Մշակման համակարգի պարամետրերն են՝**

- հանույթային աստիճանի բարձրությունը - 5մ,
- աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը - 60°,
- անվտանգության բերմայի լայնությունը – 2.0մ,
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը – 20.0մ:

Աշխատանքների վերաբերյալ մանրամասները կներկայացվեն արդյունահանման նախագծում՝ ՇՄԱԳ հիմնական փուլում:

**1.2.2. *Բնատեսությունների օգտագործումը***

***Ջրամատակարարումը և ջրահեռացումը***

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է բերովի ջրով:

Խմելու ջուր բերվում է ՍՊԻ-ՅԼԸ-1.4 ջրի ցիստեռնով:

Տեխնիկական ջուրը, որն անհրաժեշտ է փոշենստեցման համար բերել ավտոմեքենայով՝ պայմանագրային հիմունքներով:

Կենցաղային կեղտաջրերը ինքնահոս կերպով թափվելու են 25.0մ<sup>3</sup> տարողությամբ, անջրաթափանց արտաքնոցի հորը, որտեղից էլ կեղտատար մեքենայով պարբերաբար հեռացվելու են:

Բացահանքի շահագործման ընթացքում անհրաժեշտ տեխնիկական և խմելու ջրի պահանջարկը բավարարվելու է, ջրօգտագործման պայմանագրերով, մատակա Շաղափ բնակավայրից ավտոջրատարներով:

Խմելու ջրի օրական ծախսը հաշվվում է 25լ մարդ/օր:

Տեխնիկական ջուրը նախատեսվում է օգտագործել շոգ և չոր եղանակներին՝ հանքախորշում, արտադրական հրապարակում, ավտոճանապարհներին՝ փոշենստեցման նպատակով՝ յուրաքանչյուր քառ. մ-ի համար 1լ ջրի ծախս հաշվարկով:

Խմելու ջրի ծախսը օրական կազմում է 0.5մ<sup>3</sup>:

Տեխնիկական ջրի ծախսը շոգ և չոր եղանակներին հերթափոխում կազմում է 7.0մ<sup>3</sup>:

### 1.3. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը

«ԳՈԼԴ ԼԱՅՄ» ՍՊԸ-ն իր գործողություններում առաջնորդվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանդնադ միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության այն պահանջներով, որոնք առնչվում են հանքարդյունահանման ոլորտին և շրջակա միջավայրի պահպանությանը:

Դրանք են՝

#### **Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն**

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի “Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը”:

Հոդված 33.2-ով սահմանված է որ. “Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը”:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

#### **Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք**

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված 02.05.2001): “Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (24.08.2006 թիվ 1277-Ն), “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (02.1.2017 թիվ 1404-Ն) որոշումները:

“Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը” ընդունվել է ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ. N 365-Ն հրամանով:

#### **Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք**

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմեր”-ով:

#### **Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք**

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրքով:

## **Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք**

Սույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաեւ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջեւ, կազմված համաձայն ածխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

### **“Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին” Հայաստանի Հանրապետության օրենք (2014)**

Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության, համաձայն “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” 2014թ.-ի Հայաստանի Հանրապետության օրենքի: Վերը նշված օրենքի 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները:

Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և ազդեցության մակարդակի՝ “Ա”, “Բ” և “Գ” կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են ելնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից:

Փորձաքննությունը իրանացվում է երկու փուլով: Առաջին փուլում ներկայացվում է գործունեությունը նկարագրող հակիրճ բացատրագիր (նախնական գնահատման հայտ), կազմակերպվում են առաջին հանրային քննարկումները և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են բնապահպանության նախարարություն: 30 աշխատանքային օրվա ընթացքում նախարարության կազմում գործող փորձաքննական կենտրոնը ուսումնասիրում է հայտը և կազմակերպում երկրորդ հանրային քննարկումները, որից հետո տրամադրում է տեխնիկական առաջադրանք “Ա” և “Բ” կատեգորիաների համար, իսկ “Գ” կատեգորիայի դեպքում՝ փորձաքննական եզրակացություն:

Երկրորդ փուլում ձեռնարկողը կազմակերպում է երրորդ հանրային լսումները, որտեղ ներկայացնում է գործունեությունը նկարագրող փաստաթուղթը (ծրագիր, նախագիծ) և ՇՄԱԳ հաշվետվությունը, որոնք, լսումների նյութերի հետ մեկտեղ ներկայացվում են լիազոր մարմին:

“Ա” կատեգորիայի համար փորձաքննության հիմնական փուլը տևում է 60 աշխատանքային օր, իսկ “Բ” կատեգորիայի համար՝ 40 աշխատանքային օր, որի ընթացքում կազմակերպվում են չորրորդ հանրային քննարկումները: Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

### **“Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” ՀՀ օրենք /04.03.1996թ./**

Սույն օրենքը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական եւ ֆինանսական հիմունքները:

**«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք**

Օրենքը ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին:

Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը: .

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

**Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք**

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (23.11.1999 թ.):

**Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք**

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.):

Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

**Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք**

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):

ՀՀ բնապահպանության նախարարը 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է

«Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

**Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)**

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

**Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք**

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի,

բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006 թ.):

«ՀՀ բույսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014 թ. N 781-Ն որոշումը:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”:

-ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N71-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կենդանիների Կարմիր Գիրք  
-ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N72-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բույսերի Կարմիր Գիրք  
-ՀՀ կառավարության 2 նոյեմբերի 2017 թվականի «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1404-Ն որոշում

-ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014 թվականի «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:

-«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք ՊՈԱԿ-ի կանոնադրություն  
-«Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձևերը հաստատելու մասին ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N 676-Ն որոշում,

-«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշում:

- Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (1994թ.) և ՀՀ կառավարության 02.02.2006 թվականի N 160-Ն որոշումը,

- ՀՀ կառավարության 14.08.2008 թվականի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշումը,

- ՀՀ կառավարության 14.12.2017 թվականի «Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները և խախտված հողերի դասակարգումն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների սահմանելու և ՀՀ կառավարության 2006թ.մայիսի 26-ի N750-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1643-Ն որոշումը:

- ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող արածքների ռազմավարությանը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջացառումները հաստատելու մասին» N 1059-Ա որոշումը,
- ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 23-ի «Խոսքովի անտառ» պետական արգելոցի 2010-2014 թվականների կառավարման պլանը և սահմանների նկարագիրն ու հատակագիծը հաստատելու մասին» N500-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի սահմանների նկարագիրը և հատակագիծը հաստատելու մասին» N 324-Ն որոշումը,

## 2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### 2.1 Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը

Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասը վարչատնտեսական ստորաբաժանմամբ գտնվում է ՀՀ Արարատի մարզի արևելյան մասում, Ուրցաձոր համայնքի Շաղափ բնակավայրի վարչական տարածքում, գյուղից՝ 3 կմ հարավ-արևմուտք:

Տեղամասը Շաղափ գյուղի հետ կապված է գրունտային ճանապարհով, իսկ՝ Շաղափ գյուղը մարզկենտրոն Արտաշատի հետ ասֆալտապատ մայրուղով:

Մոտակա բնակավայրերն են՝ քաղաքներ Վեդին, Արարատը և Գոռավան, Շաղափ, Ուրցաձոր գյուղերը:

Շրջանի ջրագրական ցանցը թույլ է զարգացած: Հիմնական ջրային միավորը սահմանային Արաքս գետն է՝ իր Վեդի ձախ վտակով, որը հոսում է տեղամասից 1.5 կմ հյուսիս-արևմուտք, ընդլայնական ուղղությամբ՝ շրջանցելով Ուրցի լեռնաշղթան: Վեդի գետը իր ստորին հոսանքում հոսում է լայն հովիտով և լցված են գետաբերուկային առաջացումներով: Գետի ջրերն հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակներով:


Շրջանի կլիման բարձրադիր մասերում բարեխառն է (տարեկան միջին ջերմաստիճանը  $+6^{\circ}\text{C}$ -ից  $+10^{\circ}\text{C}$ ), իսկ ցածրադիր մասերում՝ չոր և խիստ ցամաքային (ամառը մինչև  $+40^{\circ}\text{C}$ , իսկ ձմռանը  $-10^{\circ}\text{C}$ ): Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 300 մմ: Սառնամանիք օրերի թիվը՝ 100-150 օր:

Արարատի մարզը բնութագրվում է զարգացած արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ: Բնակչությունը հիմնականում զբաղվում են այգեգործությամբ, հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաների մշակմամբ, ինչպես նաև անասնապահությամբ:

Արդյունաբերությունը ներկայումս հիմնականում ներառում է մի շարք ձեռնարկություններ, որոնք զբաղվում են բնական բարձրորակ շինանյութերի արդյունահանմամբ և մշակմամբ: Արարատի տրավերտինների կավերի հանքավայրերի հումքի բազայի վրա 1933թ-ից գործում է Արարատի ցեմենտի գործարանը: Արդյունաբերությունը մասամբ ներկայացված է գյուղմթերքների մշակման ձեռնարկություններով (զինի, կոնյակ, պահածոներ):

Վառելիքա-հումքային և անտառանյութերի պահանջարկը բավարարվում են միայն ներմուծման հաշվին:

Արարատի մարզը լիովին էլեկտրաֆիկացված է և մասամբ գազաֆիկացված: Բարձր լարման էլեկտրագծերն անցնում են «Շեն» տեղամասից 1.5 կմ դեպի հյուսիս, Շաղափ գետին զուգահեռ:



Նկար2.

## 2.2 Ռելիեֆը, երկրաձևաբանությունը

Արարատի մարզի հարավարևմտյան եզրին զուգահեռ 6-13 կմ լայնությամբ ընկած է Արարատյան հարթավայրի հարավ արևելյան մասը: Հյուսիսում Երանոսի լեռնաշղթան է: Հյուսիսային սահմանն անցնում է Ագատ և դրա վտակ Գողթ գետերով: Հյուսիսարևելքում Գեղամա լեռնաշղթայի հարավարևմտյան հատվածն է: Արևելքում Մժկատարի լեռներն են, որից արևմուտք ընկած է Դահնակի լեռնաշղթան, սրանից էլ հարավ գտնվում է Ուրծի լեռնաշղթան: Մարզի կենտրոնում Երասխի լեռներն են, Կոտուց, Խոսրովասար լեռնագագաթները և այլ լեռնագանգվածներ:

Տարածքի ամենացածր կետը հարավում է՝ Արաքսի հունի մոտ՝ 801մ: Ամենաբարձր կետը հյուսիս-արևելքում գտնվող Սպիտակասար լեռնագագաթն է՝ 3555,7 մ:

Տարածքի միայն մոտ 30%-ն է հարթավայրային:


Արարատի մարզում տարածված են ՀՀ-ում առկա բոլոր 8 լանդշաֆտային գոտիները: Ցածրադիր շրջաններից մինչև բարձրադիր շրջաններ դրանք հաջորդում են իրար այս հերթականությամբ. անապատային, կիսաանապատային, չոր տափաստանային, տափաստանային, լեռնաանտառային, մերձալպյան, ալպյան, ձյունամերձ: Բայց սրանցից հիմնականներն են կիսաանապատային (Արարատյան հարթավայրում), չոր տափաստանային (միջին բարձրության լեռներում), ալպյան (Գեղամա լեռնաշղթայի լանջերին):



Հանքավայրի շրջանը բնութագրվում է կտրուկ կտրտված բլուրային ռելիեֆով, խորը ձորակներով, որոնցով հոսում է Շաղափի գետը իր ձախակողմյան բազմաթիվ արագահոս վտակներով: Ծովի մակարդակից գտնվում է 1300մ բարձրության վրա:


Հանքավայրի երկրաձևաբանական և լանջերի թեքությունների սխեմատիկ քարտեզները բերվում է ստորև՝

### Մակերևույթի թեքություններ



Նկար3.

### ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՁԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Նկար4.


Մարզի լեռնային մեծ մասը զբաղեցնում են Գեղամա լեռների լանջերը և Ուրծի ու Երանոսի լեռները:

Ուրծի լեռը գտնվում է Հայաստանի Արարատի մարզում, Լանջառ գյուղից 5 կմ հարավ-արևմուտք: Բարձրությունը 2446 մ է: Ուրծի լեռնաշղթան բուսականությունից զուրկ է, ձգվում է Արարատյան դաշտի եզրով՝ կենտրոնական մասում հասնելով 2446 մետր բարձրության:

Երանոս (լեռնագագաթ Հայաստանի Արարատի մարզի հյուսիսային եզրի մոտ) Երանոսի լեռնաշղթայի արևմտյան կեսում՝ Լանջազատ գյուղից 8 կմ դեպի հյուսիս-արևելք-արևելք: Ծագմամբ ծալքաբեկորային է: Բարձրությունը 1823,7 մ է: Լանջերը՝ բացառությամբ արևելյանի, խիստ զառիթափ են՝ 40° և ավելի: Հյուսիս-արևմտյան լանջը 750 մ բարձրությամբ քարափ է, որը իջնում է դեպի Ազատ գետի հովիտը:

Ըստ ՀՀՇՆ 20.04 «ԵՐԿՐԱՇԱՐԺԱԴԻՄԱՑԿՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ» փաստաթղթի դրույթների տեղամասի տարածքը գտնվում է առաջին սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.3g հորիզոնական արագացման արժեքը:

Ստորև բերվում է հատված ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզից՝




● ՀՀ Արարատի մարզի Շաղափի օրգանաձին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամաս

Նկար5. Հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ

**Սողանքներ**

Սողանքային մարմիններ բուն երևակման տարածքում, ինչպես նաև հարակից շրջանում չեն արձանագրվել, ինչը պայմանավորված է տարածքի երկրաձևաբանական առանձնահատկություններով՝ հարթավայր, թեքության անկյունը չի գերազանցում 5-10°: Հեռավորությունը մինչև մոտակա հայտնի սողանքային մարմինները կազմում է մոտ 10կմ:



● ՀՀ Արարատի մարզի Շաղափի օրգանաձին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամաս

Նկար 6. Սողանքներ

### 2.3 Կլիմա

Պայմանավորված Հայկական լեռնաշխարհի լեռնային մակերևույթով՝ այս ամբողջ տարածաշրջանում՝ այդ թվում Արարատի մարզում, կլիման ենթակա է վերընթաց գոտիականության: Մասնավորապես այս մարզում առկա են Հայաստանում տարածված կլիմայի 8 տիպերից 6-ը, որոնք հարթավայրային շրջաններից մինչև լեռնային շրջաններ իրար հաջորդում են հետևյալ հաջորդականությամբ.

- չոր խիստ ցամաքային
- չոր ցամաքային
- չափավոր ցամաքային
- բարեխառն
- ցուրտ լեռնային
- ձյունամերձ

Արարատի մարզում տարեկան միջին ջերմաստիճանը ցածրադիր և բարձր լեռնային շրջանների միջև տատանվում է  $+10^{\circ}\text{C}$ -ի և  $-2^{\circ}\text{C}$ -ի միջև: Ձմռանն անհողմ եղանակի պայմաններում տեղի է ունենում ջերմաստիճանային շրջադասություն. սառն ու ծանր օդը կուտակվում է Արարատյան դաշտում: Այդ պատճառով միջին գոտում՝ մինչև 2000 մետր բարձրությունները, ձմեռը լինում է ավելի տաք և արևոտ, քան Արարատյան գոգավորությունում: Գարունն անցողիկ է և կարճատև: Մայիսի երկրորդ տասնօրյակից օդի ջերմաստիճանն անցնում է  $15^{\circ}\text{C}$ -ից, սկսվում է չոր, հաճախ խորշակներով երկարատև ամառը, որը շարունակվում է մինչև սեպտեմբերի երկրորդ կեսը: Աշունը մեղմ է, անհողմ, հաճախ են թույլ անձրևները: Մարզի հարթավայրային շրջանների համար բնորոշ են լեռնահովտային քամիները: Ամռանը՝ կեսօրից հետո, քամին Գեղամա լեռներից փչում է հովիտներ՝ մեղմացնելով ամառվա տապը: Հունվարյան միջին ջերմաստիճանն է այդ շրջաններում համապատասխանաբար  $-6^{\circ}\text{C}$  և  $-12^{\circ}\text{C}$ , հուլիսյան ջերմաստիճանը՝  $+26^{\circ}\text{C}$  և  $+8^{\circ}\text{C}$ , միջին տարեկան տեղումները՝ 200 մմ և 1000 մմ: Ցածրադիր շրջաններում դիտված բացարձակ առավելագույն և նվազագույն ջերմաստիճաններն են  $-33^{\circ}\text{C}$  և  $+42^{\circ}\text{C}$ , ընդ որում

վերջինս Հայկական լեռնաշխարհում դիտարկված բացարձակ առավելագույն ջերմաստիճանն է և այն գրանցվել է Արարատյան հարթավայրի հարավ-արևելքում: Ընդհանուր առմամբ Արարատի մարզն աչքի է ընկնում կլիմայի չորությամբ:

Շաղափի օրգանաձին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասի տարածքի կլիման բարձրադիր մասերում բարեխառն է (տարեկան միջին ջերմաստիճանը  $+6^{\circ}\text{C}$ -ից  $+10^{\circ}\text{C}$ ), իսկ ցածրադիր մասերում՝ չոր և խիստ ցամաքային (ամառը մինչև  $+40^{\circ}\text{C}$ , իսկ ձմռանը  $-10^{\circ}\text{C}$ ): Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 300մմ: Սառնամանիք օրերի թիվը՝ 100-150օր:

Ստորև բերված աղյուսակները բնութագրում են կլիմայական ռեժիմն ըստ «Արարատ» օդերևութաբանական կայանի տվյալների (ՀՀՇՆ II-7.01-2011):

Աղյուսակ2.3.1

Օդի ջերմաստիճանը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	7
Արարատ	818	-3.3	-0.3	6.5	13.3	18.0	22.4	26.2	25.8	20.9	13.7	6.2	-0.2	12.4	-32	42

Աղյուսակ2.3.2

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Արարատ	78	71	61	56	55	49	45	45	49	61	72	79	60	66	29

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը _____ միջին ամսական _____, մմ օրական առավելագույն												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տասնօրյա կայանի բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ջրանմեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
Արարատ	16	18	25	35	35	23	10	6	8	18	21	16	231	35	28	61
	22	34	26	31	33	37	20	31	28	32	32	28	37			

Աղյուսակ 2.3.4

Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան վեժն լրբառա յին ճեռում, (հեմա)	Ամիսներ	Միջին արագությունը, մ/վ								Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (Մ15/մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "ս" տարիների ընթացքում			
			Միջին արագությունը, %	Չուսի սային (Հս)	Հյուսիս- Արև վեյան (ՀսԱրև)	Արև վեյա ն (Արև)	Հարավ- Արև վեյան (ՀվԱրև)	Հարավ (Հվ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս- Արևմտյան (ՀսԱրմ)				20	50	100	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Արարատ	321.6	հունվար	6	3	8	18	10	5	11	29	50	1,3	1,9	18	25	27	29
			1,9	1,6	1,7	2,7	2,1	1,5	1,9	2,2							
		ապրիլ	13	4	8	29	15	5	8	18	28	2,3					
			2,7	2,3	2,7	3,4	2,8	2,7	2,4	2,8							
		հուլիս	18	3	6	14	12	5	10	32	23	2,3					
			2,6	2,7	2,2	2,7	2,2	2,1	2,6	3,0							
		հոկտեմբեր	17	3	8	18	13	4	11	26	39	1,5					
			2,3	1,8	1,7	2,3	2,0	1,9	2,1	2,5							

**Անարև օրերի քանակը**

Բնակավայրի, օրերնաթափանակվան կայանի անվանումը	ըստ ամիսների												տարեկան
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Տեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Արարատ	9	6	3	2	1					1	2	8	32

**ՀՀ ԿԼԻՄԱՅԻ ՎԵՐՆՆԹԱՑ  
ԳՈՏԻՆԵՐԸ**

Մասշտաբ 1:2 000 000



Նկար 7.

**2.4 Մթնոլորտային օդ**

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:


Հանքի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու /ավազագույնը 1.2կմ/, այստեղ չկան գործող արդյունաբերական և խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններ, համապատասխանաբար օդային ավազանը չի կրում անտրոպոգեն զգալի ազդեցություն:



Հանքավայրի տարածքում մշտական դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ անալիտիկ եղանակով: Դրա համար «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն»-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-նուղեցույց:

Ըստ ուղեցույցի, մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Ուրցաձոր համայնքը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

- Փոշի՝  $0.2 \text{ մգ/մ}^3$ ,
- Ծծմբի երկօքսիդ՝  $0.02 \text{ մգ/մ}^3$ ,
- Ազոտի երկօքսիդ՝  $0.008 \text{ մգ/մ}^3$ ,
- Ածխածնի օքսիդ՝  $0.4 \text{ մգ/մ}^3$ :







## *Աղմուկի մակարդակ*


Ներկայացվող տեղանքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն քանի որ դրանց երթևեկության ինտենսիվությունը շատ ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձ չէ:

### **2.5 Ջրային ռեսուրսներ**

Արարատի մարզի գետերը պատկանում են Արաքսի ավազանին: Նրա տարածքով են անցնում Հրազդան գետն իր ստորին հոսանքով, իսկ Ազատ, Վեդի և Արածո գետը՝ ամբողջ ընթացքով՝ ակունքից գետաբերան: Մի քանի տասնյակ գետակներ էլ ամռանը բոլորովին ցամաքում են: Գետերից միայն Արածո գետն է, որ իր ստորին հոսանքում անցնում է Հայաստանից դուրս: Մնացած գետերի ջրերն ամռանը լիարժեք օգտագործվում են ոռոգման կարիքների համար: Մնումը ձնհալքային, անձրևաջրային, վարարում են ապրիլ-մայիս ամիսներին: Ոռոգման նպատակով Ազատ գետի վրա կառուցվել է համանուն ջրամբարը, Արածո գետի վրա՝ Ջանգակատան ջրամբարն է Հորթուն բնակատեղիի մոտ: Մարզում կառուցվել է Կախանովի և Արտաշատի ջրանցքները 19-20-րդ դարերում: Կախանովի ջրանցքը կառուցվել է 1870-1874 թվականներին Անդրկովկասյան փոստային օկրուգի պետ գեներալ Ն. Ն. Կախանովի նախաձեռնությամբ դեռևս հնագույն ժամանակներից գոյություն ունեցող ջրանցքի ընթացքով: 1870 թվականին Կախանովը Արազդայանի (Երասխավան) կիսաանապատները 65 տարով վարձակալեց՝ նպատակ ունենալով այնտեղ զբաղվել շաքարի ճակնդեղի մշակությամբ: 1874 թվականի նոյեմբերի 5-ին շինարարությունն ավարտվեց: Ջրանցքն ունի 36 կմ երկարություն: Այն վերակառուցվել է 1930 թվականին: Արտաշատի ջրանցքը կառուցվել է 1930 թվականին: Սկիզբ է առնում Հրազդան գետի ձախ ափից՝ Երևանի տարածքում, ունի 61 կմ երկարություն: Վեդի գետն ու իր Քարաղբյուր, Շաղափ վտակներն ունեն տեղական ոռոգիչ նշանակություն: Մարզի հողատարածքների ոռոգումն ապահովելու նպատակով կառուցված են Մխչյանի, Ազատի, Արմաշի, Քաղցրաշենի, Մասիսի, Արագափի խոշոր ջրհան կայանները:

Հանքավայրի հյուսիսով հոսում է Շաղափ գետը:

**ՎԵՂԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ**



Նկար 8.

Շաղափ գետը Վեղիի ձախ վտակն է: Սկիզբ է առնում Դահնակի լեռնաշղթայից: Երկարությունը 19.5կմ է, ջրի ավազանը՝ 131կմ<sup>2</sup>:



Մակերևութային ջրերը կապված են ժամանակավոր մթնոլորտային տեղումների հետ:

Շրջանում մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 400-500մմ-ը որոնց մի մասը ներծծվելով ապարների ճեղքերում և ծակոտիներում, բռնաթափվում են սեզոնային աղբյուրների ձևով, իսկ մյուսները ժամանակավոր հոսքերի տեսքով հոսում են դեպի Շաղափ և Վեղի գետերը:

## ***2.6 Հողային ծածկույթ***

**Հող**, բնական գոյացություն՝ կազմված ծագումնաբանորեն իրար հետ կապված հորիզոններից, որոնք ձևավորվել են երկրի կեղևի մակերեսային շերտերի վերափոխման հետևանքով՝ ջրի, օդի և կենդանի օրգանիզմների ներգործության շնորհիվ: Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է, որը փոփոխվում է մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական մնացուկներով:

Հողն անընդհատ զարգանում և փոփոխվում է: Բնութագրվում է բերրիությամբ՝ բույսերին մատչելի սննդանյութերով և ջրով ապահովելու ունակությամբ, որի շնորհիվ այն դառնում է արտադրամիջոց, աշխատանքի առարկա, նյութական բարիքների աղբյուր: Հողը գյուղատնտ. արտադրության հիմնական միջոցն է. ագրոտեխնիկական, ագրոքիիական ու բարելավող միջոցառումների կիրառմամբ այն կարելի է դարձնել առավել արդյունավետ, որի ցուցանիշը բույսերի բերքատվությունն է:


ՀՀ տարածքի հողային ծածկույթը համեմատաբար երիտասարդ է: Այստեղ հողագոյացումը հիմնականում սկսվել է պլիոցենում և շարունակվել չորրորդական ժամանակաշրջանում:

Կիսաանապատային հողեր, առաջանում են չոր տափաստանային և անապատային գոտիների փոխանցման տարածքում, չոր կլիմայի (200-350 մմ տեղումներ) և չորասեր կիսաթփուտային նոսր բուսածածկի ներգործության պայմաններում:

Տարածված են Արևելյան և Հարավ-Արևմտյան Ասիայում, Կենտրոնական Ղազախստանում, Անդրկովկասում:

Հայաստանում գորշ կիսաանապատային հողերը զբաղեցնում են Արարատյան գոգահովտի նախալեռների տարածքը և զանգվածներով հանդիպում են Արմավիրի, Արագածոտնի և Արարատի մարզերում:

Կիսաանապատային հողերը բնութագրվում են վերին հորիզոնների մոխրագորշ կամ հարդագորշ գույնով, հումուսի սակավությամբ (1-2%), հումուսային հորիզոնների մեծ (20-35 սմ) հզորությամբ, փոշեթեփուկային ստրուկտուրայով, մեծ մասամբ պրոֆիլի ուժեղ քարքարոտությամբ և կարբոնատացմամբ, փոխանցման հորիզոնում ցեմենտի առկայությամբ: Ստորին հորիզոնները հաճախ հարուստ են զիպսով և ջրալույծ աղերով, աղքատ՝ ազոտով և ֆոսֆորով: Վերին հորիզոններն ունեն կավավազային, իսկ ստորինները՝ ավազային մեխանիկական կազմ: Բարելավումից հետո, ռոտզման և պարարտացման պայմաններում, կարող են դառնալ բերքատու:



Նկար 9.

Հանքավայրի համար հայցվող տարածքի 4.4703հա մակերեսով տարածքի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության:

## 2.7 Բուսական և կենդանական աշխարհ

### Կենդանական աշխարհ


Հայաստանի կենդանական աշխարհը ընդհանուր առմամբ ներկայացված է անողանաշարավոր կենդանիների ավելի քան 17000 և ողնաշարավոր կենդանիների 523 տեսակներով:

Ողնաշարավոր կենդանիները ներկայացված են ձկների, երկկենցաղների, սողունների, թռչունների և կաթնասունների դասերով, որոնցից առավել հարուստը թռչունների դասն է(349 տեսակ):

Հայաստանի տարածքը տեղադիրքով Միջերկրածովյան կենսաաշխարհագրական տարածաշրջանի Իրանական, Փոքրասիական ու Պոնտոս-կովկասյան մարզերի խաչմերուկ է, որով և պայմանավորված է այդ մարզերի ազդեցությունը Հայաստանի կենդանական աշխարհի տեսակների վրա:

Այս գոտիներին բնորոշ անողնաշարների ֆաունան ուշագրավ է նաև գիտական տեսանկյունից. ընդգրկում է հիմնականում հնագույն միջերկրածովային և իրանաթուրան. ծագման տարրեր: Տարածված են առավել ջերմասեր ու չորադիմացկուն կենդանիները, որոշ տեսակներ հանդիպում են նաև տափաստանային գոտում:

Միջատներից տարածված են կրծողների բներում ապրող եգիպտ. խավարասերը, ադոթարարները: Բազմաթիվ են ուղղաթև միջատները (հատկապես՝ դերիկորուսը, կալիպտամուսը, անապատային մորեխը, ցիկադներից՝ կանաչ ցիկադատրան նն), կիսակարծրաթևները (բուսակեր կրիայիկները, վառ գուլավոր գրաֆոսոմները, տրիգոնոսոմները, չոր փշեր հիշեցնող ֆիլմոռֆները, գունավոր խոշոր գիշատիչ ռեդավիրուսները): Շատ հարուստ է բզեզների ֆաունան, հատկապես՝ գիշատիչ ցիցինդելներ, բրոսկուս, սկարիտ, խոշոր, անթև կալիստենես ցեղերի տեսակները, սապրոֆագներից շատ են գոմաղբում զարգացող սկարաբեյները, կոպրերը և այլ տեսակներ: Բազմաթիվ են բուսակեր (վառ գլաֆիրուսներ, հացբզեզներ, ոսկեբզեզներ, երկարակնձիթ կլիոններ և այլն), ինչպես նաև մակաբույծ թարախահաններ, կլերիդներ, Շելկովնիկովի արաֆիպտերուս բզեզները: Հանդիպում են ցանցաթև նեմոպտերան և լերտան, ասկալաֆուսները, խոշոր մրջնատյուծ-պալպարիսները:



- ԿԵՆԴՆԱՆՏԵՍԱԿՆԵՐ**
-  Վայրի խոզ
  -  Եղեգնակատու
  -  Նապաստակ
  -  Գյուրգա
  -  Ճահճակողբ
  -  Շնագայլ
  -  Միջերկրածովյան կրիա
  -  Թխակապույտ աղավնի

Նկար10.

Թիթեռներից բնորոշ են խոշոր առագաստաթիթեռները, սադափաթիթեռները, ձերմակաթիթեռները, գիշերային թիթեռներից՝ սատիրներն ու սֆինքսները (իշակաթնուկի և պատատուկի), բվիկները, արջաթիթեռներից՝ վառ արկտիա Հերա տեսակը, բույսերի վնասատու օկնոգինան, խոշոր կարմրասև ակսիոպենան: Բազմաթիվ են ձիաստացները, կրետ-որսորդները, մենակյաց մեղուների մակաբույծ՝ խրիզիդիդ տեսակները: Բազմազան են մրջյունները (մեսսոր, կատազլիֆիս նն) և մուտիլիդները: Երկթևներից տարածված են ճանճերի առանձին տեսակներ. հանդիպում են բոմբիլիդ ընտանիքի մակաբույծ ճանճերը (անաստեխուս, տոքսոֆորա), հեմիպենդես ցեղերի տեսակները), գիշաճանճերից՝ խոշոր շիկադեղին լաֆրիան, մոխրագույն հայկ. կտենոտան, պալեարկտիկայի ամենախոշոր երկթև միջատը՝ հսկա գիշաճանճ սատանասը: Մյուս անողնաշարներից հանդիպում է խայտաբղետ կարիճը, հազվադեպ՝ խիստ թունավոր սև կարիճը: Բազմաթիվ են մորմերը՝ սև ռագոդեսները, խոշոր գալեոդները, փոքր կարշիաները: Մովորական են սարդերը, հատկապես՝ ամենախոշորները: Ցածրադիր վայրերում փափկամարմիններից բնորոշ են

Էշերի (*Levantina esheriana*) և Դերբենտի (*Xeropicta derbentina*), սրաբերան (*Xerosecta crenimargo*) խիսունջները:



Դերբենտի (*Xeropicta derbentina*)

#### Նկար 11.

Կիսաանապատային գոտում հանդիպող սողուններից են Ռադդեի ժայռային (*Darevskia radde*) և շերտավոր (*Lacerta stri-gata*) մողեսները, դեղնափորիկը (*Pseudopus adopus*), երկարատու սցինկը (*Eumeces shneider*), ոսկեգույն տրախիլեպիսը (*Trachylepis aurata*), անդրկովկասյան մագլցող սահնօձը (*Zamenis hohenacker*), կովկասյան կատվօձը (*Telescopus fallax*), գյուրգան (*Vipera lebetina*), օձերի այլ տեսակներ, սովորական մողեսօձը (*Malpolon monspessulanus*), վզնցավոր էյրենիսը (*Eirenis collaris*), հայկական էյրենիսը (*Eirenis modestus*), որդանման կույրօձը (*Typlops vermicularis*), միջերկրածովային կրիան (*Testudo graeca*):

Ջանգեգուրի, Վայքի լ-գանգվածի և այլ շրջանների կիսաանապատային և տափաստանային գոտիներում սահմանափակ տարածքներ են զբաղեցնում անդրկովկասյան փասիանը (*Phasianus colchicus*), թուրաջը (*Francolinus francolinus*), շիկապոչ քարաթռչնակը (*Oenanthe xanthopyrma*) և թռչունների շուրջ 50 այլ տեսակներ: Այստեղ բնադրում են քարակաքավը (*Alectoris chukar*), սպիտակախածի կեռնեխը (*Turdus torquatus*), սպիտակափող սիխակը (*Irania gutturalis*), կարմրակատար շամփրուկը (*Lanius senator*), վարսակոցարը (*Lymnocryptes minimus*): Տարածված է կարմրաթև նուպնուկը (*Rhodopechys sanguinea*), հանդիպում նաև կարճամատ ճնճղուկը (*Carospiza brachydactyla*), կաթնասուններից՝ սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), փոքրասիական (*Meriones blackleri*) և պարսկ. (*Meriones persicus*) ավազամկները, կզաքիսը (*Martes martes*), սովորական աղվեսը (*Vulpes vulpes*), սպիտակատամ սրնչակը, լայնականջ [*Erinaceus (Hemie-chinus) auritus*] և սպիտակափոր [*Erinaceus (E.) concolor*] ոգնիները, շիկակարմիր իրիկնաչղջիկը (*Nyctalus noctula*), Օգնի մաշկեղ չղջիկը (*Vespertilio ognevi*), ականջեղ չղջիկը (*Plecotus auritus*) ևն:



անդրկովկասյան փասիանը  
(*Phasianus colchicus*)



շիկապոչ քարաթռչնակը  
(*Oenanthe xanthopyrna*)

Նկար 12-13.


ՀՀ Արարատի մարզի Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասից մոտ 5.0 կմ (հյուսիսում) հեռավորության վրա հանդիպում է Հիրիկ նրբագեղ/*Iris elegantissima* միջատը:

Անդրկովկասյան սահնօձ/*Transcaucasian rat snake* սողունը հանդիպում է հանքավայրից 2.0 կմ (հարավում) հեռավորության վրա:

### Բուսական աշխարհ

Արարատի մարզին բնորոշ է կիսաանապատային բուսականություն: Նման բուսականություն հանդիպում է նաև Զանգեզուրում, Մեղրիում, Վայքի լեռնաշղթաների վրա: 600-1500 մ բարձրություններում գտնվող գրեթե բոլոր չոր, անջրդի հողատարածքները՝ դռերը, ծածկված են կիսաանապատային բուսականությամբ: Քարքարոտ կիսաանապատների ամենախոշոր զանգվածները հանդիպում են Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերում և այլն:

Ի տարբերություն անապատների՝ այստեղ բուսական համակեցությունում զգալի տոկոս են կազմում էֆեմեր ճիմ առաջացնող դաշտավլուկազգիները (անապատասեր, ցորնուկ, այծակն, դաշտավլուկ և այլն):



Նկար 14.

Հայաստանի կիսաանապատային բուսականության տիրապետող բույսերն են հոտավետ օշինդրը, Կապար Փշոտ Գազ տարօրինակ Կնճիթաթերթիկ գոգավոր Սիզախոտ Նշենի Ֆենցի կոխիան, նոնեան, լերդախոտը, բորբոսատեսուկը, դաշտավլուկը, կապարը, հազարատերևուկը, որոնք երբեմն առաջացնում են ինքնուրույն բուսականություն, համակեցություններ:


ՀՀ Արարատի մարզի Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասից 5.5 կմ (հյուսիսում) հեռավորության վրա՝ Ուրցաձոր համայնքի մոտակայքում հանդիպում են Սզնի, ալոճ պոնտական/*Crataegus pontica*, Խլածաղիկ ատրպատականյան/*Scrophularia atropatana*, Կուրկուրան կարճաթև/*Hedysarum micropterum*, Ստեպտորամֆուս պարսկական/*Steptorhamphus persicus*, Հիրիկ նրբագեղ/*Iris elegantissima* բուսատեսակներ:

## 2.8 Վտանգված էկոհամակարգեր և բնության հատուկ պահպանվող տարածքներ

Երևակման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած տեսակների աճելավայրեր չեն արձանագրվել:



Բուն ՀՀ Արարատի մարզի Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասի տարածքը ամբողջությամբ զուրկ է բուսական ծածկույթից: Հետևաբար, օրգանածին կրաքարերի արդյունահանման աշխատանքների ազդեցությունը կենսաբազմազանության վրա գրեթե զրոյական է:



Նկար 15. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

**Խոսրովի անտառ պետական արգելոց (նաև Խոսրովի անտառ),**

պետության կողմից պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող տարածք Հայաստանի Արարատի մարզում: Պահպանվող տարածքը ստեղծվել է 330-338 թվականներին Խոսրով Գ Կոտակ թագավորի կողմից ստեղծված անտառի տարածքի մի մասի վրա: Այն ունի շուրջ 1700 տարվա պատմություն: Արգելոցի ներկայիս տարածքը պատմական անցյալում գտնվել է Մեծ Հայքի Այրարատ նահանգում:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցը ստեղծվել է 1958 թվականին Խորհրդային Հայաստանի կենտրոնական մասի չոր նոսրանտառային, ֆրիգանային և կիսաանապատային լանդշաֆտների, բուսական և կենդանական եզակի համարվող համակեցությունների պահպանության նպատակով: Արգելոցը տեղակայված է Հայաստանի Արարատի մարզի հյուսիսարևելյան մասում, Գեղամա լեռնավահանի և Մերձարաքսյան ծալքաբեկորավոր լեռնաշղթաների միջև: «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքի չափի 23213.5 հա; Արգելոցի ֆլորան հարուստ է հազվագյուտ և անհետացող բուսատեսակներով: Այստեղ ներկայացված են ավելի քան 80 տեսակներ, որոնք ընդգրկված են Հայաստանի Կարմիր Գրքում: Արգելոցի տարածքում աճում են 1849 տեսակի անոթավոր բույսեր, որոնք ներկայացված են 588 ցեղերով և 107 ընտանիքներով: Ֆլորան ներկայացված է 24 էնդեմիկ տեսակներով:

Կան հազվագյուտ և էնդեմիկ տեսակներ, օրինակ՝ հայկական ալոճենին, Վավիլովյան աշորան (տարեկան) և այլն:

Արգելոցում հանդիպում են 283 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որից

- թռչուններ - 192 տեսակ
- կաթնասուններ - 44 տեսակ
- սողուններ - 33 տեսակ
- ձկներ - 9
- երկկենցաղներ - 5 տեսակ:

Ողնաշարավոր կենդանիներից 58 տեսակ գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում, իսկ 51 տեսակ Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում:

Կաթնասուններից հանդիպում է կովկասյան ընձառյուծը, լուսանը, գորշ արջը, աղվեսը, անտառային կատուն, հնդկական մացառախոզը, աքիսը, քարակզաքիսը, գորշուկը, նապաստակը, գայլը, **բեզուարյան այծը**, վայրի խոզը և այլ տեսակներ:

**Կովկասյան ընձառյուծը** գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում: Արգելոցի տարածքում հանդիպում է չորասեր գիիուտներով ծածկված դարավանդներում: Որպես բույն օգտագործում են քարանձավները, ժայռաճեղքերը, խիտ թփուտները:

**Լուսանը** նախընտրում է կերով հարուստ գիիու նոսրանտառները: Տաք ժամանակաշրջանում բարձրանում է նաև ենթալպյան և ալպյան մարգագետիններ: Լուսանները սնվում են կրծողներով, նապաստակներով, թռչուններով, կարող են նաև որսալ երիտասարդ բեզուարյան այծեր և վայրի խոզի ձագեր: Վարում է գիշերային և մթնշաղային գաղտնի կյանք:

Արգելոցի ամենամեծ գիշատիչը **գորշ արջն** է: Նրա նախընտրած կենսամիջավայրերն են տերևաթափ և խառը անտառները, մշտադալար գիիուտները, քարանձավները և ժայռոտ վայրերը: Արեալը զգալի չափով ներառում է այն վայրերը, որտեղ աճում են պտղատու ծառեր, հատապտուղներ և ընկուզենիներ, որոնցով արջը սնվում է: Գրանցված է Հայաստանի և նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքերում, ինչպես նաև ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

**Բեզուարյան այծը** (*Capra aegagrus*) արգելոցի բնիկներից է: Իր անվանումը ստացել է շնորհիվ ստամոքսում կերի հանքային խտանյութերից առաջացած գնդերի՝ բեզուարների, որոնք ժամանակին լայնորեն օգտագործել էին ժողովրդական բժշկության մեջ: Կյանքի տևողությունը 10-17 տարի է, քաշը՝ 60-100 կգ: Սնվում են չոր և կոշտ բուսատեսակներով: Նախընտրում է տեղանքի ժայռաշատ, քարքարոտ, հաճախ հողմահարված ու խոր ձորերով մասնատված անմատչելի զառիթափերը: Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքերում, ինչպես նաև Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում:

**Վայրի խոզը** (*Sus scrofa*) հանդիպում է լայնատերև անտառում: Լեռնատափաստանային և մերձալպյան տարածքները նրանք օգտագործում են մի լանջից մյուսը անցնելու ժամանակ<sup>[11]</sup>:

Կաթնասուններից 13 տեսակ գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում:

Արգելոցի տարածքում հանդիպում է 192 տեսակի թռչուններ, որոնք պատկանում են 44 ընտանիքի, որն էլ կազմում է Հայաստանի թռչնատեսակների ընդհանուր քանակի 56 տոկոսը: Գիշատիչ թռչուններից արգելոցի տարածքում հանդիպում են գառնանգղը (*Gypaetus barbatus*), գիշանգղը (*Neophron percnopterus*), սպիտակագլուխ անգղը (*Gyps fulvus*), սև անգղը (*Aegyptus monachus*), տափաստանային մկնաճուռակը (*Circus macrourus*), սապսանը (*Falco peregrinus*), միջերկրածովյան բազեն (*Falco biarmicus*), դաշտային մկնաճուռակը (*Circus cianeus*), մեծ ճուռակը (*Buteo buteo*), ցախաքլորաորսը (*Accipiter gentilis*), քարարծիվը (*Aquila rapax*) և այլ տեսակներ:

Արգելոցը միակ տարածքն է Հայաստանում, որտեղ բնադրում է **սև անգղը**: Բույնը կառուցում է գիհու ծառերի կատարին: Սև անգղի թևերի բացվածքը կարող է հասնել մոտ 3 մ, իսկ քաշը մինչև 12,5 կգ: Մյուս անգղների համեմատ, գերադասում է սնվել կենդանիների մկանային հյուսվածքներով, ավելի քիչ քանակությամբ՝ մաշկով և ոսկորներով: Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում և Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում:

Խոսքովի արգելոցի տարացքում կան հայկական ճարտարապետության բազմաթիվ հուշարձաններ, պատմական կառույցների փլատակներ:

**«Գոռավանի ավազուտներ»** արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, զբաղեցնում է Արարատյան գոգավորության նախալեռնային թեք հարթությունները, Վեդի քաղաքի հարավային մասը՝ Գոռավան գյուղի մոտ, Վեդի գետի միջին հոսանքի ձախափնյա տարածքները, ծովի մակերևույթից 1100-1200 մետր բարձրության վրա:

Պետական արգելավայրի պահպանության օբյեկտներն են մնացորդային սորուն ավազների եզակի բուսական և կենդանական տեսակները: Արգելավայրը ձևավորվել է Արարատյան հարթավայրի Ուրծի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի ռելիեֆային ալյուվյալ նստվածքների մի քանի տեղամասերի վրա, ծովի մակերևույթից 920-980 մ բարձրության վրա:

Պահպանության օբյեկտն է Անդրկովկասում բնական ջուզգունի (*Calligonum polygonoides*) միակ ամբողջական աճման էկոհամակարգը, իր յուրօրինակ ֆլորայի և ֆաունայի էնդեմիկ, հազվագյուտ և անհետացող տեսակներով:

Արգելավայրի բուսականության հիմնական տիպը ավազային ջուզգունային անապատն է: Արգելավայրի շրջակայքում տեղակայված ուժեղ քարքարոտ տեղամասերում ներկայացված են կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները: Սա միակ տեղամասն է Փոքր Կովկասում, որտեղ ներկայացված են ջուզգունի համակեցությունները, և խիստ հազվագյուտ է ողջ Կովկասի համար: Արգելավայրը Երևանյան ֆլորիստիկ շրջանի հազվագյուտ տեսակներով ամենահարուստ տարածքն է, որը պահանջում է անհետաձգելի պահպանության միջոցառումներ:

Արգելավայրը անոթավոր բույսերի հազվագյուտ և անհետացող տեսակների բացարձակ թվաքանակով Հայաստանում գտնվում է առաջին տեղում /10 տեսակներ գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում/: Ընդհանուր առմամբ արգելավայրի տարածքում աճում են 160 տեսակի անոթավոր բույսեր:

Վերջին 10 տարիների ընթացքում արգելավայրի վիճակը կտրուկ վատացել էր: Չնայած 1958 թվականից Գոռավանի ավազուտները առանձնացվել են որպես պետական արգելավայր, սակայն առ այսօր, ոչ մի բնապահպանական միջոցառում այստեղ չի իրականացվել:

Ավելին՝ արգելավայրի տարածքում շինարարական նպատակով իրականացվում էր ավազի արդյունահանում: Գարնանային և աշնանային արածեցումը հանդիսանում էր մշտական ճնշող գործոններից մեկը: Վերջին տարիներին իրավիճակը՝ կապված արածեցման ժամանակահատվածի և կառուցվածքի փոփոխության հետ, վատթարացել էր, որը գործնականում իրականացվում էր կլոր տարին և բացասական մեծ ազդեցություն են թողել բուսականության վրա: Արգելավայրի տարածքում ջեռուցման համար /վառելափայտ/ ակտիվ կերպով հատվում էր ջուզգունը, որից պահպանվել է մոտ 300 թուփ՝ ընդ որում, դրանցից շատերն էլ գտնվում են ճնշված վիճակում:

**«Խոր Վիրապ»** պետական արգելավայրը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Փոքր Վեդու գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի աջակողմյան հատվածում գտնվող՝ 50,28 հեկտար խոնավ տարածքի վրա, ծովի մակերևույթից 815.8-887 մետր բարձրության վրա:

Արգելավայրի կազմակերպման հիմնական նպատակը միջազգային նշանակություն ունեցող խոնավ տարածքի էկոհամակարգի, բուսական ու կենդանական աշխարհի՝ հատկապես ջրլող թռչունների ու դրանց ապրելավայրերի, հազվագյուտ բուսատեսակների ու դրանց աճելավայրերի պահպանության, բնականոն զարգացման, վերարտադրության ու կայուն օգտագործման ապահովումն է: Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները մերձարաքսյան խոնավ տարածքի էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհն ու ջրաճահճային բուսականությունն են:

Արգելավայրի վրա բացասական ներգործություն ունեցող տնտեսական գործունեությունը սահմանափակելու կամ արգելելու նպատակով 100 մետր լայնությամբ շրջագծով տարածքը սահմանվում է որպես պահպանական գոտի:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

ՀՀ Արարատի մարզում հաշվառված են հետևյալ բնության հուշարձանները՝

**Երկրաբանական հուշարձաններ**

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը

1	2	3
1.	«Անձավիկ» քարանձավ	Արարատի մարզ, Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
2.	«Դաշտաքար» քարանձավ	Արարատի մարզ, Դաշտաքար գյուղից 02 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա
3.	«Խոր հոր» անձավային համակարգ	Արարատի մարզ, Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
4.	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Արարատի մարզ, Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա
5.	«Անանուն» անտիկլինալ ծալք	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
6.	«Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
7.	«Անանուն» ծալքագոյացման մերկացում	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին
8.	«Հորթունի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
9.	«Զերմանիսի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Զերմանիս գյուղատեղիի մոտակայքում
10.	«Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա	Արարատի մարզ, Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ

#### Կենսաբանական հուշարձաններ

1. «Աղակալած ճահճուտ»	Արարատի մարզ, քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա
-----------------------	---

Հանքավայրի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Մոտակա բնության հուշարձանը «Խոր հոր» անձավային համակարգն է, որը գտնվում է Շաղափ գյուղից 3կմ հյուսի-արևելքում:

Հանքավայրի տարածաշրջանում բնապահպանական տեսանկյունից խոցելի, կամ բնության հատուկ պահպանվող տարածքները բացակայում են:

2.9 ՀՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՑԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ

2.75 ՇԱՂԱՓ գյուղ

			4	5	6		8
	1.1		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՈՒՐՑԱԶՈՐ»	9-17 դդ., 19-20 դդ.	գյուղից 4 կմ հվ-ամ		3. գյուղատեղի Չիմանդարա
	1.2		ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	19-20 դդ.	գյուղատեղիից 0.5 կմ հվ-աե		2
	1.2		ԵԿԵՂԵՑԻ	10-12 դդ.			3.1
	1.3		ԽԱԶՔԱՐԵՐ	10-17 դդ.			7 հատ (3.2-3.8)

2.95 ՈՒՐՑԱԶՈՐ գյուղ

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 6 կմ հս-ամ	Հ	1
2			ԱՄՐՈՑ՝ՏԱՓԻ ԲԵՐԴ՝ (ԳԵՎՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒ ՆՈՒ ԲԵՐԴ)	10-13 դդ.	գյուղից 6 կմ հս-ամ	Հ	2
	2.1		Եկեղեցի	10-13 դդ.		Հ	2.1: Ենթակայու- թյամբ ներկայաց-ված է 2 հուշարձան (2.1.1- 2.1.2)
	2.2		Օժանդակ շինություններ	10-13 դդ.		Հ	2.2
3			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ ՍԱԳՐԱԲԵՐԴ՝	10-16 դդ. 19-20 դդ.	գյուղից 5 կմ աե, Խոսրով գետակի ստորին հոսանքում		3. 'Ղարաբաղյար' գյուղատեղին է՝ վեր-անվանված ՀՀ Կառավա-րու-թյան 29.07.2004 թ. N 1095-Ն որոշ-մամբ
	3.1		Եկեղեցի	5-6 դդ.			հիմնավեր (3.1)
	3.2		Եկեղեցի	13-14 դդ.			կիսավեր (3.2)
4			ԵԿԵՂԵՑԻ	13-15 դդ.	Գյուղից 10 կմ հս, Ուրծ քաղաքատեղիից հվ	Հ	հիմնավեր (4)
5			ՔԱՂԱՔԱՏԵՂԻ ՈՒՐԾ	4-17 դդ.	գյուղից 7 կմ հս-աե	Հ	5

5.1	Ամբողջ Ուրծի բերդ՝	4-13 դդ.		Հ	5.1
5.2	Եկեղեցի	5-6 դդ.	քաղաքատեղիի հվ-ամ մասում, Խոսրով գետի աջ ափին, փոքրիկ բլրի գագաթին	Հ	հիմնավեր (5.2)
5.3	Եկեղեցական համալիր՝ (Վանք)	14-15 դդ.	քաղաքատեղիի հս մասում, բարձունքի վրա	Հ	5.3
5.3.1	Գերեզմանոց	14-17 <sup>11</sup> .			5.3.3
5.3.2	Եկեղեցի	14 դ.			փոքր (5.3.1)
5.3.3	Եկեղեցի	14 դ.			մեծ (5.3.2)
5.4	Եկեղեցական համալիր՝ (Վանք)	15-17 դդ.	քաղաքատեղիի աե մասում	Հ	կիսավեր (5.4)
5.4.1	Գավիթ	15-16 դդ.			5.4.2: Ենթակայություններ կայացված է 1 հուշարձան (5.4.2.1)
5.4.2	Գերեզմանոց	12-17 դդ.			5.4.3: Ենթակայություններ կայացված է 9 հուշարձան (5.4.3.1-5.4.3.9)
5.4.3	Եկեղեցի	15-16 դդ.			5.4.1: Ենթակայություններ կայացված է 3 հուշարձան (5.4.1.1-5.4.1.3)

### 3.ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

#### 3.1 ՀՀ Արարատի մարզի սոցիալ տնտեսական բնութագիրը

Արարատի մարզը իր զարգացած գյուղատնտեսությամբ, արդյունաբերությամբ և իր տնտեսական ներուժով Հայաստանի Հանրապետության կարևորագույն մարզերից է: Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող Արարատի մարզի զարգացումը միշտ էլ կարևորվել է ՀՀ կառավարության կողմից:

Մարզի ընդհանուր տարածքը՝ 2096քկմ է, կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի 7%-ը:

Մարզն ունի շուրջ 258.9 հազար բնակչություն, որից 73.0 հազ. քաղաքաբնակներ են (28%), 185.9 հազարը՝ գյուղաբնակ (71%): Մարզի ամբողջ բնակչությունը 2011-2015թթ ընթացքում նվազել է շուրջ 0,7 %-ով, ՀՀ-ում նույնպես գրանցվել է բնակչության թվի նվազում 0,8%, իսկ Արմավիրի մարզում այն աճել է 0,2%-ով: Արարատի մարզի բնակչության խտությունը՝ 141 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա, Արմավիրի մարզի բնակչության խտությունը կազմում է 215 մարդ 1 քկմ-ի վրա, այն դեպքում երբ ՀՀ-ում միջին խտությունը կազմում է 101 մարդ: ՀՀ-ում ամենաբարձր բնակչության խտությունը գրանցված է մայրաքաղաքում՝ 4815 մարդ 1 քկմ-ի վրա: Արարատի մարզը այս ցուցանիշով մարզերի մեջ գրավում է 2-րդ տեղը Արմավիրից հետո:

Մարզի բնակչությունը համարյա հավասարաչափ տեղաբաշխված է 3 տարածաշրջաններում: 01.01.2018թ. դրությամբ մարզի մշտական բնակչությունը ըստ տարածաշրջանների հետևյալն է՝ ամբողջ ազգաբնակչությունը կազմում է 258.9 հազար մարդ, որից Արտաշատի տարածաշրջանում 90.4 հազար մարդ, Արարատի տարածաշրջանում 89.5 հազար մարդ, Մասիսի տարածաշրջանում՝ 79 հազար մարդ:

Արարատի մարզում բնակչության տեղաբաշխումը հավասարաչափ չէ, ամենամեծ կուտակումը մարզում Արտաշատի և Մասիսի տարածաշրջաններում են՝ հիմնականում հարթավայրային մասում դեպի մայրաքաղաքի ուղղությամբ, դեպի նախալեռնային և լեռնային բնակավայրեր՝ բնակչության խտությունը կտրուկ նվազում է:

Մարզը բնակչությամբ համարյա միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով՝ 93%, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են եզդիներ

2.5%, ասորիներ 0,09%, քրդեր 0.05%, ռուսներ 0.4%:

ՀՀ Արարատի մարզի տնտեսապես ակտիվ բնակչության թիվը 128.1 հազար մարդ է, որը կազմում է մարզի ընդհանուր բնակչության 49.5%-ը: Տնտեսապես ակտիվ բնակչության կշիռը Արարատում գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը և Արմավիրի մարզի ցուցանիշը:

Արարատի մարզում տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 69.3%, որը հանրապետական միջին ցուցանիշից բարձր է 6.8%-ով: Տարբերություններ կան տղամարդկանց (71.7%) և կանանց (65.2%), ինչպես նաև քաղաքային (44%) և գյուղական (82%) տարածքների միջև: Համեմատած Արմավիրի մարզի հետ տնտեսական ակտիվության մակարդակը բարձր 1.7%-ով:



ՀՀ Արարատի մարզում առկա են 7087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 11.6%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 274, իսկ Արմավիրի մարզում առկա են 9087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 14.9%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 341: Ինչպես և ՀՀ բոլոր մարզերում այստեղ նույնպես ձեռնարկությունների գերակշռող մասը ունի մի քանի աշխատող և կարող են համարվել ՓՄՁ ձեռնարկություններ:

Մարզի տնտեսության հիմնական ցուցանիշներն ըստ ՀՀ տնտեսության ճյուղերի հետևյալն են՝ արդյունաբերություն՝ 12.9 %, գյուղատնտեսություն՝ 14.1 %, շինարարություն՝ 2.1 %, մանրածախ առևտուր՝ 2.7 %, ծառայություններ՝ 1.6 %:

Մարզը Հայաստանի արդյունաբերական և գյուղատնտեսական առաջատարներից է՝ այստեղ մեկ շնչի հաշվով արտադրվող արդյունաբերական արտադրանքը ավել է քան ՀՀ միջին ցուցանիշը շուրջ 1.5 անգամ, իսկ գյուղատնտեսական արտադրանքը շուրջ 1.6 անգամ, այլ ոլորտներում մարզը զգալիորեն զիջում է ՀՀ միջին ցուցանիշներին:

Արդյունաբերություն Արարատի մարզը Հայաստանի Հանրապետության զարգացած արդյունաբերական մարզերից է: ՀՀ արդյունաբերության ծավալի 12.9 %-ը կազմում է Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը: Մարզում 2015թ գործել են թվով 99 արդյունաբերական ձեռնարկություններ՝ 2011թ այդ թիվը կազմել է 77: Արարատի մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն գինու- կոնյակի 10-ից ավելի խոշոր գործարանները, “Արարատ – ցեմենտ”, “Ոսկու կորզման ֆաբրիկան”, Արտաշատի, Արարատի պահածոների, “Մասիս տոբակո”, “Ինտերնեշնլ Մասիս տոբակո” գործարանները:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների, արտադրություններն են և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ 3 ճյուղերը.

1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն)

2) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա)

3) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ազրոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

2011-2015թթ. արդյունաբերական արտադրանքի ծավալը Արարատի մարզում աճել է մոտ երկու անգամ, Արմավիրի մարզում 1.3 անգամ, իսկ ՀՀ-ում 1.3 անգամ:

2014-2015թթ. Արարատի մարզում արդյունաբերական ձեռնարկությունների, փոքր ձեռնատրիական սուբյեկտների կողմից թողարկված արտադրանքի ծավալի աճը կազմել է 19 %:

2011-2015թթ. արդյունաբերական պատրաստի արտադրանքի իրացման ծավալները ՀՀ-ում աճել է 1.38 անգամ Արարատի մարզում՝ 2.1:

Մարզի արդյունաբերական արտադրության 92.3%-ը բաժին է ընկել մշակող արդյունաբերությանը, որը հիմնականում գյուղմթերքի վերամշակությունն է և որը մեծապես պայմանավորված է մարզում գյուղատնտեսական բարձր արտադրողականությամբ:

#### **Գյուղատնտեսություն.**

Արարատի մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է՝ այն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության մեջ: Արարատի մարզի հարթավայրային և նախալեռնային գոտիները նպաստավոր են բուսաբուծության, իսկ լեռնային գոտիները՝ անասնապահության զարգացման համար: Մարզի ազգաբնակչության 71.5% բնակվում է գյուղական վայրերում, որոնց կենսունակությունը պայմանավորված է գյուղատնտեսական գործունեությամբ:

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերը՝ ներառյալ տնամերձերը՝ 164 696 հա, կազմում են մարզի ընդհանուր տարածքի 78.8%-ը: Գյուղատնտեսական հողատեսքերի 87.6%-ը: կազմում են մշակովի տարածքները՝ ներառյալ տնամերձերը 42 260 հա:

Մարզի ակտիվ գյուղատնտեսական ուղղվածության ձեռնարկությունները 31 են, որոնցից 6-ը զբաղվում են կաթի վերամշակմամբ, 2-ը՝ մսի, մնացած 23-ը՝ բուսաբուծական մթերքների վերամշակմամբ: Վերամշակող կազմակերպությունների կողմից 2015թ գնված գյուղմթերքի ծավալները 2011թ-ի համեմատությամբ Արարատի մարզում ավելացել են 24.4%-ով, հանրապետությունում՝ 44.6%-ով:

Արտահանում: Մարզը արտահանման տեսանկյունից ունի լավ ցուցանիշներ: 2015 թ. ցուցանիշներով մարզի արտահանումը կազմում է ՀՀ արտահանման 9.1%, կամ մեկ շնչի հաշվով 6% գերազանցում է ՀՀ մեկ շնչի հաշվով արտահանումը:

ՀՀ Արարատի մարզի արտահանման ծավալները, հաշվարկված ՀՀ դրամով, 2011-2015թթ. տարիներին կտրուկ բարձրացել է՝ շուրջ 5.4անգամ, Արմավիրի մարզինը՝ 11.7 անգամ, հանրապետությանը՝ 1.42:

Մարզից արտահանվում է հիմնականում գյուղմթերքի վերամշակումից ստացված արտադրանք՝ գինի, կոնյակ, միրգ, բանջարեղեն, պահածոյացված գյուղմթերք՝ և հանրապետությունու և հանրապետությունից դուրս մեծ պահանջարկ ունեն Արարատի մարզի քաղցրահամ մ ռգերը, բարջարեղենը, մուրաբաները, բնական հյութերը, չրերը:

Մարզի արտահանման մեջ մեծ ծավալներ են կազմում բնական հանքաքարերի արտահանումը:

2011-2015թթ. Արարատի մարզի ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը ՀՀ-ի ընդհանուրի մեջ նվազել է 5.4%-ից դարձել է 1,6%, Արմավիրի մարզի ծառայությունների ծավալը նույնպես նվազել է 2,3% -ից դարձել 1,6%

Առևտուր: 2011-2015թթ. Արարատի մարզի առևտրի շրջանառության տեսակարար կշիռը ՀՀ-ում աճել է 2,2%-ից դարձել է 2,8%, Արմավիրի մարզի առևտրի շրջանառությունը նույնպես աճել է 2,3% դարձել 4,1% :

**3.2 Ազգակիր համայնքը, ենթակառուցվածքները /առողջապահություն, տրանսպորտային համակարգ, էներգացանց, կրթություն/, հողերի տնտեսական յուրացման բնութագիրը**

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016 թվականի հունիսի 17-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ձևավորվել է Ուրցաձոր բազմաբնակավայր համայնքը:

**Ուրցաձոր** համայնքի կազմում ընդգրկված են ***Ուրցաձոր, Շաղափ և Լանջանիստ*** բնակավայրերը:

Համայնքի կենտրոնը Ուրցաձոր համայնքն է:

**Ուրցաձոր:** Գյուղ Արարատի տարածաշրջանում, Վեդի քաղաքից 9 կմ արևելք: Մարզկենտրոնից գտնվում է 26 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Կարաբաղյար Ներքին, Զիման, Ուրխաձոր անվանումները: Ուրցաձոր է վերանվանվել 1978 թ-ին:

Գյուղից 7 կմ հյուսիս-արևմուտք գտնվում է Խոսրովի անտառի արգելոցը, որտեղ կան 3 եկեղեցիների ավերակներ: Ուրցաձորի մոտակա Կոտուց սարի լանջին աղբյուրի մոտ կա հին գերեզման, որն ըստ ավանդության Խոսրով Բ թագավորի գերեզմանն է: Գյուղը տեղադրված է Վեդի գետի հովտում, Ուրծի լեռների լանջերին: Ծովի մակարդակից ունի 1075 մ բարձրության վրա: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -30-ից -50: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 աստիճան, իսկ առավելագույնը՝ 42 աստիճան: Հաճախ լինում են խորշակներ, որնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300մմ է: Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

Ունի արտեզյան աղբյուրներ:

1873 թ-ին գյուղն ունեցել է 756, 1897 թ-ին՝ 1260, 1939 թ-ին՝ 1447, 1959 թ-ին՝ 1444, 1979 թ-ին՝ 2227, 1989 թ-ին՝ 2463 բնակիչ: 1988-1989 թթ. Աղբբեջանից այստեղ են տեղաձուլվել շուրջ 100բնակիչ: Ըստ 2005 թ-ի ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքի բնակչությունը կազմում է 2924 մարդ, որից 49% տղամարդիկ են, իսկ կանայք՝ 51%: Մինչաշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 26%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 63%, հետաշխատունակները՝ 11%: Գյուղն ունի առկա 806 տնտեսություն:

Ունի դպրոց, գրադարան, հիվանդանոց, կապի հանգույց:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսակն

նշանակության հողերը կազմում են շուրջ 5944հա: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 765 հա: Զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ, ծխախոտագործությամբ: Մշակում են բանջարաբուստանային, հացահատիկային և կերային կուլտուրաներ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի հիմնախնդիրը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

**Շաղափ:** Շաղափ գյուղը գտնվում է Արարատի մարզում, Ուրցաձոր համայնքում, մարզկենտրոնից գտնվում է 45 կմ հարավ-արևելք:

Գյուղը հիմնադրվել է 1873 թվականին: Նախկինում գյուղի անունը եղել է Շաղափլու: 1968 թվականից վերանվանվել է Շաղափ: Շրջակայքում կան հին գյուղատեղիներ և 12-րդ դարի ավերակ եկեղեցու մնացորդներ:

Գյուղը տեղադրված է Վեդի գետի ձախակողմյան Շաղափ վտակի հովտում, շրջապատված մեղմաթեք և ոչ բարձր բլուրներով: Ծովի մակարդակից գտնվում է 1300 մ բարձրության վրա:

Գյուղը զբաղեցնում է՝ 64.21 կմ<sup>2</sup> մակերեսի տարածք: Բնակչությունը 2011թ-ի դրությամբ կազմում է 1023 մարդ:

Գյուղի բնակիչների նախնիների մի մասը 1916 -1922 թթ. եկել են Արևմտյան Հայաստանի Վանի և Շատախի շրջաններից:

Կլիման չոր է և ցամաքային: Ձմեռը մեղմ է, ամառը՝ շոգ և ցամաքային: Հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -2 -ից -5 °C: Հուլիսյան միջին ջերմաստիճանը կազմում է 23-ից 25 °C: Տարեկան մթնոլորտային տեղումները կազմում են 350-500 մմ: Բնական լանդշաֆտները կիսաանապատային են և չոր տափաստաններ են: Գյուղն ունի 232 տնտեսություն: Համայնքի տնտեսության մասնագիտական ճյուղը գյուղատնտեսությունն է և անասնապահությունը:

Հանքավայրի համար հայցվող տարածքի 4.4703հա մակերեսով տարածքի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության:

## **4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

### **4.1. Հիմնական բնապահպանական ռիսկերը**

- Բացահանքի, արտաքին լցակույտի և ենթակառուցվածքների տարածքներում բուսականության չնչին քանակի ոչնչացում (տարածքը բուսազուրկ է),
- Հանքարդյունահանման աշխատանքների արդյունքում կենդանիների կենսապայմանների ձևափոխություններ,
- Փոշու արտանետումներ և տարածում շրջակա միջավայրում՝ հանքային տեխնիկայի աշխատանքի արդյունքում
- Փոշու արտանետումներ և տարածում շրջակա միջավայրում՝ հանքարդյունահանման աշխատանքների արդյունքում,
- Դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ,
- Հանքային տեխնիկայի, կոմպրեսորային կայանի, օդափոխիչների և ավտոտրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում առաջացող աղմուկ,
- Հանքային տեխնիկայի շահագործման և կայանման ընթացքում վառելիքի և քսայուղերի արտահոսքեր,
- Բնական լանդշաֆտի ձևափոխում:

### **4.2. Հանքարդյունաբերության ազդեցությունը կրող հիմնական սուբյեկտները**

Ա. Շրջակա միջավայրի տարրերը, այդ թվում՝

- Օդային ավազան
- Մակերևութային ջրեր
- Հողային ռեսուրսներ
- Կենսաբազմազանություն
- Ընդերք

Բ. Բնակչությունը և նրա կենսաապահովման տարրերը՝

- Բնակչության առողջություն
- Բնակչության կենսակերպ
- Տնտեսական գործունեություն /հիմնականում գյուղատնտեսություն/
- Ենթակառուցվածքներ
- Պատմամշակութային արժեքներ:

## 5. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### 5.1 Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի աղտոտող հիմնական նյութերը փոշին է և շահագործվող տեխնիկա-տրանսպորտային միջոցների առաջացրած ծխագազերը և գազային արտանետումները:

Չոր եղանակներին, փոշու ծավալները նվազեցնելու նպատակով, նախատեսվում է ջրցանել արտադրական հրապարակները և գրունտային ճանապարհները:

Ծխագազերի արտանետումներով մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում, ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների:

Դիզելային շարժիչները ցանկալի է ունենան ծխագազերի վնասակար արտանետումների կլանիչներ:

### 5.2 Մակերևութային և ստորգետնյա ջրեր

Հանքարդյունահանման շահագործման ժամանակ ջրային ռեսուրսները օգտագործվում են փոշենստեցման, լեռնային զանգվածների խոնավացման, ինչպես նաև սպասարկող անձնակազմի խմելու, կենցաղային և հիգիենիկ նպատակներով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- փոշենստեցման համար ջրցանը իրականացվում է այնպիսի ծավալներով, որ չառաջանա արտահոսք:

Ստորերկրյա և մակերևութային ջրերը հանքավայրի տարածքում բացակայում են:

### 5.3 Հող

Հանքարդյունահանման աշխատանքների նախապատրաստման ընթացքում խախտվում է որոշ մակերեսով հողածածկույթը: ՀՀ օրենքների պահանջով շինարարական և օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտը հանվում և պահեստավորվում է:

ՀՀ կառավարության 08 09 2011թ. 1396-Ն որոշմամբ սահմանվում է օգտահանված բերրի հողի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները: Համաձայն այդ որոշման, այն առաջնային կարգով կիրառվում է խախտված հողերի ռեկուլտիվացման նպատակով:

Հողածածկույթի աղտոտումը վառելիքաքսուկային նյութերով կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակով՝ բացառելու համար վառելիքի և յուղի պատահական արտահոսքը:

Օգտագործված յուղերը հավաքել մետաղյա տակաոններում և պահպանել հատուկ առանձնացված տեղերում /օրինակ՝ վառելիքաքսուքային նյութերի պահեստում/ հետագա ուտիլիզացման նպատակով:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգումները պետք է կատարել միայն այդ նպատակով նախատեսված արտադրական հարթակներում:

Հողի աղբոտումը կանխելու նպատակով արտադրական հարթակում և աշխատակիցների հանգստյան վայրերում տեղադրվում են աղբամաններ:

Առաջացած մետաղի թափոնը /անօգտագործելի պահեստամասեր և անվադողեր/ նախատեսվում է հավաքել և իրացնել համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպություններում:

#### **5.4 Բուսական և կենդանական աշխարհ**

Հանքավայրի բուն տարածքում ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ չեն արձանագրվել:

Օրգանածին կրաքարերի արդյունահանման աշխատանքների բացասական ազդեցությունը տարածքի բուսական և կենդանական աշխարհի վրա պայմանավորված է խոտաբուսական ծածկույթի խախտման հետ, որը հետո կվերականգնվի ռեկուլտիվացիոն աշխատանքների արդյունքում իրականացնելով կենսաբանական ռեկուլտիվացիա: Ինչպես արդեն ներկայացվել է (Բուսական և կենդանական աշխարհը բաժին)՝ տարածքը խոտածածկ է, չկան անտառապատ տարածքներ: Հանքավայրի տարածքում կենդանիների բներ, որջեր չեն դիտարկվել:

Բացառվում է տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տարածքներից դուրս:

Նախատեսվում են կենսաբազմազանության՝ բուսական և կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ,

Բուսական աշխարհի պահպանությունը իրականացնել համաձայն կառավարության 2014թ. թիվ 781-Ն որոշման դրույթների՝ բուսական աշխարհի օբյեկտների դրանց աճելավայրերի պահպանությունով ապահովել վայրի բուսատեսակների բազմազանության ամբողջականությունը, բուսական ծածկույթի ջրապահպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ և ռեկրեացիոն հատկությունների անխաթարությունը:

Կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ, ա) գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը.

բ) կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը.

գ) կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության պահպանությունը.

դ) կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը.

## 5.5 Պատմամշակութային արժեքներ

Հանքարդյունահանման համար հայցվող տարածքը պատմամշակութային գրանցված կոթողներից գտնվում է նվազագույնը 3կմ հեռավորության վրա, ուստի ոչ մի բացասական ազդեցություն հանքավայրի շահագործման ընթացքում չի սպառնում:

Սակայն հանքարդյունահանման աշխատանքների տեղամասում պատմամշակութային նշանակություն ունեցող և մարդու գործունեության արդյունք հանդիսացող պատմական հետաքրքրություն ներկայացնող կառույցների, շինությունների, գերեզմանների, իրերի և այլնի հայտնաբերման դեպքում ՀՀ օրենսդրության պահանջով նախատեսվում է դադարեցնել դրանց տարածքում արդյունահանման աշխատանքները, այդ մասին տեղեկացնել պետական լիազորված մարմնին և հրավիրել համապատասխան մասնագետներ, որոնց օգնությամբ կկատարվի հայտնաբերված հուշարձանների ուսումնասիրություն, կոնսերվացում, անհրաժեշտության դեպքում՝ տեղափոխում:

## 5.6 Սոցիալական ազդեցություն

Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փոստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան և ապահովեն բոլոր տեսակի աշխատանքների անվտանգ կատարումը:

Աշխատակազմը կունենա խմելու որակյալ ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Աշխատատեղերում, հասանելի վայրում, կլինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը կապահովվի համազգեստով և անվտանգության անհրաժեշտ միջոցներով:

Անվտանգության սարքավորումների օգտագործումը կուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը կնախատեսի հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:

Ֆիզիկական ազդեցությունները /օրինակ՝ աղմուկը/ կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները կունենան համապատասխան իլացուցիչներ: Բոլոր աշխատակիցները կապահովվեն անհատական պաշտպանության միջոցներով:

Նախատեսվում են աշխատողների սանիտարակենցաղային հարմարություններ՝ հանդերձարան, ցնցուղարան, զուգարան և հանգստի սենյակ՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի:

Սպասարկող անձնակազմի ընտրության ժամանակ առաջնահերթություն է տրվելու տեղի բնակչությանը:

Նախատեսվում կազմակերպել երիտասարների ուսուցում, իսկ մյուս աշխատողները կանցնեն վերապատրաստում:



## 5.7. Բնապահպանական մշտադիտարկումների պլան

Շրջակա միջավայրի մշտադիտարկումը /**Էկոլոգիական մոնիթորինգը**/ շրջակա միջավայրի, այդ թվում շրջակա միջավայրի բաղադրիչների, բնական էկոլոգիական համակարգերի, նրանցում ընթացող գործընթացների, դրական և բացասական տեղաշարժերի, իրավիճակի **համալիր դիտարկում** է, որը թույլ է տալիս գնահատել և կանխատեսել շրջակա միջավայրի վիճակի փոփոխությունները:

Էկոլոգիական մշտադիտարկման նպատակներն են. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և նորմավորումը, ազդեցության աղբյուրների վերահսկումը /արտանետումները, ֆիզիկական ազդեցությունը, մնացորդային ազդեցությունը, վտանգները/, շրջակա միջավայրի բաղադրիչների որակի վերահսկողությունը: Այս ամենը անհրաժեշտ է ազդակիր համայնքների բնակչության անվտանգության և առողջության, աղետների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման, ռացիոնալ բնօգտագործում և բնապահպանություն ապահովելու:

**Մշտադիտարկման պլանը** հստակեցնում է դիտարկման օբյեկտը /տեղամասը/, չափվող կամ վերահսկվող պարամետրը, նրա թույլատրելի սահմանը, չափման կամ վերահսկման մեթոդը, հաճախականությունը և այլն:

Մշտադիտարկումը իրականացվում է շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների նկատմամբ՝ մակերևութային և ստորգետնյա ջրեր, մթնոլորտային օդ, հողեր, կենսաբազմազանություն, սոցիալական միջավայր, ֆիզիկական ազդեցություններ, հանքարդյունահանման համալիրի կառույցներ /լցակույտեր, բացահանք/, և այլն:

Եթե չափված պարամետրերը գերազանցում են ցույց տալիս կամ զարգացման դինամիկ միտում, ապա պարզվում են այդ գերազանցումների պատճառները, ճշտվում են հակազդեցության գործողությունները, միջոցները, և վերացվում են խախտումները՝ նախատեսված միջոցառումներին համապատասխան:

Շրջակա միջավայրի իրավիճակի մասին տեղեկատվությունը, որը ստանում ենք էկոլոգիական մշտադիտարկման արդյունքում, թույլ է տալիս կանխարգելել կամ նվազեցնել շրջակա միջավայրի վրա նախաձեռնության ազդեցությունը, պլանավորել տարածաշրջանի բնապահպանական իրավիճակը և համապատասխան հետևություններ անել տարածաշրջանի կայուն զարգացման բնագավառում:

Տեղական բնապահպանական մշտադիտարկման արդյունքներով հետևություններ են անում տվյալ նեղ տարածաշրջանի, ազդակիր համայնքի սահմաններում, շրջակա միջավայրի, մարդու բնակության և գործունեության միջավայրի վրա համալիրի ազդեցության մասին:

Շրջակա միջավայրի մշտադիտարկման արդյունքները պետք է անհապաղ հրապարակվեն հասարակության և պետական լիազոր մարմինների համար ընդունելի ձևաչափով:

Դիտակետերի հենակետային ցանցում ընդգրկված մթնոլորտային օդի, հողի նմուշառման դիտակետերի տեղադիրքն նշված է միասնական կոորդինատային համակարգով ներկայացված մշտադիտարկումների ծրագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող հատակագիծ - հավելվածում: Այդ կետերի մասին տեղեկությունը ներկայացվում է նաև աղյուսակի տեսքով: Մշտադիտարկման հենակետային ցանցում դիտակետերի քանակը և տեղադիրքը ընտրվում է հաշվի առնելով հանքավայրի հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական առանձնահատկությունները և պայմանները:

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշման համաձայն նախատեսվում է իրականացնել մշտադիտարկումներ:


Աղյուսակ 6.

**ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ**

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
<b>Մթնոլորտային օդ</b>	բացահանքի տարածք, ճանապարհներ, արտադրական հրապարակ,	- հանքափոշի, այդ թվում՝ ծանր մետաղներ և կախյալ մասնիկներ (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն, մանգանի օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
<b>Հողային ծածկույթ</b>	արտադրական հրապարակ, , ճանապարհների շրջակայք,	- հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանակման հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը՝ Fe, Ba, Mn, Zn, Sr, B, Cu, Mo, Cr, Co, Hg, As, Pb, Ni, V, Sb, Se), -- հողերում նավթամթերքների պարունակությունը	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	- տարեկան մեկ անգամ - ամսական մեկ անգամ
<b>Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ</b>	ընդերքօգտագործման տարածքին հարակից շրջան	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	տարեկան մեկ անգամ
<b>Աղմուկ և թրթռում</b>	Հանքի տարածք	Աղմուկի մակարդակը	Աղմուկի մակարդակի գործիքային չափում	Ամսական մեկ անգամ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 150.0 հազ.դրամ:

## Մշտադիտարկումների կետերի քարտեզ



Սկար 15

## Մշտադիտարկումների կետերի քարտեզ՝ ARM WGS-84 համակարգով

Հողերի ադոտովածության մշտադիտարկման կետեր՝

- |  |                         |
|--|-------------------------|
| Հանքավայրում՝  | 1. X=4415870, Y=8487420 |
| Լցակայանի վրա՝                                       | 2. X=4415895, Y=8487380 |
| Արդյունաբերական հրապարակ՝                            | 3. X=4415820, Y=8487505 |
| Մթնոլորտային օդի ադոտովածության մշտադիտարկման կետեր՝ |                         |
| Հանքավայրում՝  | 4. X=4415860, Y=8487420 |
| Լցակայանի վրա՝                                       | 5. X=4415890, Y=8487380 |
| Ճանապարհի վրա՝                                       | 6. X=4415830, Y=8487510 |
| Արդյունաբերական հրապարակ՝                            | 7. X=4415815, Y=8487505 |
| Վայրի բնության մշտադիտարկման կետեր՝                  |                         |
| Հանքավայրի հարակից տարածք                            | 8. X=4415810, Y=8487260 |

**Հավելված 1. Բնապահպանական կառավարման պլան**

Նախատեսվող գործունեությունը քստ փուլերի	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատվությունը		
			Կատարող	Վերահսկող	
<b>Ն ա խ ա պ ա տ ք ա ս տ ա կ ա ն ա շ խ ա տ ա ն ք ն ե ր</b>					
1. Ճանապարհների, աշխատանքային հրապարակի կառուցում	1. Փոշու արտանետում	1. Չոր եղանակներին ջրել արտադրական հրապարակները:		«ԳՈԼԴ ԼԱՅՄ» ՍՊԸ	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին  Համայնքապետարաններ
	2. Դիզ. վառելիքի այրման արգասիքների արտանետում	1. Տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում, ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների: Դիզելային շարժիչները ցանկալի է ունենան կլանիչներ;			
	3. Հողերի աղբոտում և աղտոտում դիզ. վառելիքի և յուղերի արտահոսքից	1. Տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում՝ բացառելու համար վառելիքի և յուղերի պատահական արտահոսքը և ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների: Օգտագործված յուղերը հավաքել մետաղյա տակառներում և պահպանել հատուկ առանձնացված տեղերում /օրինակ՝ վառելիքաքսուքային նյութերի պահեստում/ հետագա ուտիլիզացիայի համար: 2. Առաջացած մետաղի և այլ թափոնը /անօգտագործելի պահեստամասեր և ավտոդողեր/ հավաքել և ուղարկել ուտիլիզացիայի:			
	4. Հողերի խախտում	1. Արտադրական հրապարակի տարածքից նախապես օգտահանել բերրի հողաշերտը և պահեստավորել ռեկուլտիվացման աշխատանքների ժամանակ օգտագործելու նպատակով;			

**Հանքարդյունահանման աշխատանքներ**

<p>2. Հանքավայրի շահագործում</p>	<p>1. Մթնոլորտային օդի աղտոտում ա/Փոշու արտանետում բ/ դիզ. վառելիքի այրման արգասիքների արտանետում</p> <p>2. Հողերի խախտում</p> <p>4. Հողերի աղբոտում վառելանյութի և յուղերի արտահոսքից և անօգտագործելի պահեստամասերով</p>	<p>ա. Չոր եղանակներին ջրել արտադրական հրապարակները:</p> <p>բ. Տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում, ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների: Դիզելային շարժիչները ցանկալի է ունենան կլանիչներ</p> <p>Աշխատաքների կատարմանը զուգընթաց կատարել խախտված հողերի ռեկուլտիվացիա. հարթեցում և բերրի հողաշերտի փոում</p> <p>1/Տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում՝ բացառելու համար վառելիքի և յուղերի պատահական արտահոսքը և ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների:</p> <p>2/ Օգտագործված յուղերը հավաքել մետաղյա տակաոներում և պահպանել հատուկ առանձնացված տեղերում /օրինակ՝ վառելիքաքսուքային նյութերի պահեստում/ հետագա ուտիլիզացիայի համար:</p> <p>Առաջացած մետաղի և ռետինի թափոնը /անօգտագործելի տամասեր և ավտոդողեր/ հավաքել և ուղարկել ուտիլիզացիայի:</p> <p>3/Տեխնիկա-տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումը և ընթացիկ վերանորոգումը իրականացնել տեխնիկական սպասարկման կայաններում:</p> <p>1.Բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից ու արտադրական տարածքներից դուրս:</p> <p>1.Կենցաղային աղբի առանձին հավաքման տեղի կահավորում, աղբամանների տեղադրում աշխատակիցների հանգստյան տեղերում սննդի ընդունման կետերում:</p> <p>Կանոնավոր աղբահանում:</p> <p>1.Աշխատակազմը պետք է ունենա խմելու ջրի և</p>		<p>«ԳՈԼԴ ԼԱՅՄ» ՍՊԸ</p>	<p>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p> <p>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p>
----------------------------------	---	---	--	------------------------	---

	<p>5. Ազդեցություն բուսական կենդանական աշխարհի վրա</p> <p>6. Շրջակա միջավայրի աղբոտում կենցաղային աղբով</p> <p>7. Աշխատակազմի առողջության և անվտանգության վնասում</p>	<p>զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Աշխատատեղերում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը պետք է ապահովվի համազգեստով և անձնական անվտանգության անհրաժեշտ միջոցներով: Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում: 1/Տեխնիկատրանսպորտային բոլոր միջոցները պետք է ունենան համապատասխան իլացուցիչներ: Արգելել առանց իլացուցիչների տեխնիկական միջոցների աշխատանքը: Բոլոր աշխատողները և վարորդները պետք է ունենան համապատասխան անհատական պաշտպանիչ միջոցներ:</p> <p>Նախատեսվում է իրականացնել կենսաբանական ռեկուլտիվացիա, կենդանիական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ</p> <p>Աղբը հավաքել հատուկ աղբահավաք տարաներում, ապա հեռացնել համայնքի կողմից հատկացված վայրեր</p> <p>Աշխատակազմը կունենա խմելու որակյալ ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Աշխատատեղերում, հասանելի վայրում, կլինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը կապահովվի համազգեստով և անվտանգության անհրաժեշտ միջոցներով:</p> <p>Անվտանգության սարքավորումների օգտագործումը կուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը կնախատեսի</p>			<p>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p> <p>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p> <p>ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին</p>
--	---	---	--	--	---

	9.Ֆիզիկական ազդեցություններ /աղմուկ, տատանումներ/	հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում: Տեխնիկա-տրանսպորտային միջոցները կունենան համապատասխան խլացուցիչներ: Բոլոր աշխատակիցները կապահովվեն անհատական պաշտպանության միջոցներով:			
--	---	---	--	--	--

***Հ ա ն ք ի    փ ա կ ու մ***

3.Հանքարդյունահանման աշխատանքների ավարտ	1.Շրջակա միջավայրի վրա մնացորդային ազդեցություն	1.Հեռացնել տեխնիկա-տրանսպորտային միջոցները և արտադրական սարքավորումները: Ապամոնտաժել ժամանակավոր կառույցները, դուրս բերել շինարարական աղբը և չօգտագործված նյութերը: 2.Ավարտել ռեկուլտիվացման աշխատանքները. հարթեցում և բերրի հողաշերտի փռում 3.Հանքի փակման ծրագրով նախատեսված սոցիալական մեղմացման ծրագրի ամբողջական կատարում 4.Հիմնական ճանապարհների բարեկարգում: 5.Հանքի փակման մշտադիտարկման պլանի իրագործում նախատեսված ժամանակաշրջանում	Փակման ծրագրով նախատեսվող ծախսեր	«ԳՈԼԴ ԼԱՅՄ» ՍՊԸ	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
---	---	---	----------------------------------	-----------------	---

Հավելված 2.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԿԱՅԱԿԱՆ**

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՍԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ**

Սույն վկայականով հաստատվում է «7» Օգոստոսի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սիստեմայում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ԳՈՒԴ ԼԱՅՄ» ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արարատ, համայնք Ուրցաձոր գյուղ Ծաղափ

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՅՎԱԾ ՓԱՏՍԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի վարձակալության 27.07.2018թ. ս/մ 2231 պայմանագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 03-075-0116-0212

Մակերեսի չափը (հա)՝ 4.4703

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Ընդերքի օգտագործման համար տրամադրված

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 07082018-03-0046, գաղտնաբառ՝ GFBQAFDWYFG2

Էջ 1



## Օգտագործված գրականություն

1. «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալներ, 2019թ.
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. ՀՀ Արարատի մարզպետարանի պաշտոնական կայք
8. Հայաստանի Ազգային Ատլաս - հատոր Ա–2008 թ.